



Եվրոպական Միության Համարակա ՀԱՆՐԱ  
EUROPEAN UNION FOR ARMENIA



ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ  
ԵՐԿՎՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ  
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE



# ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Առկա Վիճակի եւ գարգացման  
Նախադրյալների ուսումնասիրություն

## զեկույց



## Հետազոտական ծրագրի աշխատանքային թիմ

Ծրագրի ղեկավար՝ Արթուր Նաջարյան

Ծրագրի մշակման աջակիցներ՝ Աննա Եղոյան, Կարեն Տերտերյան

### Զեկույցի հեղինակ

Երիտասարդական ոլորտի հետազոտող, սոցիոլոգ՝ Մարինա Գալստյան

### Զեկույցի խմբագրակազմ

Խմբագիր՝ Ռոզա Յովհաննիսյան

Զևավորող և էջադրող՝ Աշոտ Ղարիբյան

Բաց Երիտասարդական աշխատանքը Դայաստանում. առկա վիճակի և զարգացման նախադրյալների ուսումնասիրություն: Զեկույց  
Գյումրի: Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, 2019,  
56 էջ:

Զեկույցում ներկայացված են Դայաստանում բաց Երիտասարդական աշխատանքի զարգացման նախադրյալները, Երիտասարդների հետ տարվող աշխատանքներում բաց Երիտասարդական աշխատանքին բնորոշ բաղադրիչների առկայության կարևորությունը ոլորտի ներկայացուցիչների գնահատմամբ, Երիտասարդության, այդ թվում Երեխնաների պաշտպանության ոլորտներին առնչվող քաղաքականության փաստաթերերը, բյուջետային միջոցների ուսումնասիրությունը, ինչպես նաև Երիտասարդության ոլորտի հիմնական դերակատարների քարտեզագրումը: Իրականացված ուսումնասիրության հիման վրա նշակվել են առաջարկություններ՝ ըստ ոլորտի ներկայացուցիչների գնահատականների ու կարիքների:

Աշխատանքը նախատեսված է ՀՀ կառավարության համապատասխան գերատեսչությունների, ՏԻՄ-Երի, միջազգային կառույցների, Երիտասարդական կազմակերպությունների, Երիտասարդության հարցերով հետաքրքրված մասնագետների ու փորձագետների համար:

Ուսումնասիրությունը հիմնված է առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների, խմբային քննարկումների ու փաստաթերերի վերլուծության վրա:  
Սույն զեկույցի որևէ նյութի վերարտադրումը բույլատրելի է միայն ոչ առևտրային նպատակներով և աղբյուրի պատշաճ հիման պայմանով:

© Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, 2019

## **Հակիրճ տեղեկություն «Հայաստանում բաց Երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագրի մասին**

Երիտասարդությունը հասարակության զարգացման հիմքն է: Երիտասարդների ներուժի բացահայտման ու կարողությունների զարգացման համար ձեռնարկված միջոցները կարենոր են պատասխանատու, ակտիվ քաղաքացիներ ծևավորելու համար:

Ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանում բաց Երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացմանը՝ տեղական ու միջազգային փորձի ջատագովությամբ և հանրային քաղաքականությունների բարելավմամբ:

Ծրագրի հասուրկ նպատակներն (խնդիրներն) են՝

- ուսումնասիրել ԲԵԱ-ի միջազգային փորձը և Հայաստանում դրա ներդրման հնարավորությունները,
- շահագրգիռ կողմերի հետ քննարկել Հայաստանում ԲԵԱ-ի մոդելի ներդրման անհրաժեշտությունն ու հնարավորությունները,
- նպաստել Հայաստանում ԲԵԱ-ի զարգացման շուրջ միջսեկտորալ և ՔՅԿ-Կառավարություն-ՏԻՄ համագործակցության ծևավորմանը,
- բացահայտել միջազգային ցանցերին անդամակցելու հնարավորություններն ու նպաստել ԲԵԱ-ի տեղական ցանցի ծևավորմանը:

Սույն գեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիոնով գործարկվող, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթարամաշնորհի շի շրջանակներում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանում բաց Երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

## Բովանդակություն

Նապավումների ցանկ.....	5
Հիմնական հասկացությունների սահմանում.....	6
Ներածություն.....	7
Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները.....	8
Ուսումնասիրության մեթոդաբանություն.....	9
Դայաստանում Երիտասարդական աշխատանքի օրենսդրական հիմքերը.....	10
Դայաստանում Երիտասարդական աշխատանք իրականացնող հիմնական դերակատարները.....	11
Դայաստանում Երիտասարդական աշխատանքին հատկացվող ֆինանսական ռեսուրսները.....	25
Եզրակացություն.....	30
Առաջարկություններ.....	32
Օգտագործված գրականության և փաստաթղթերի ցանկ.....	34
Դավելվածներ.....	35
Դավելված 1.	
Գյունորով «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի «Երիտասարդների տուն» բաց Երիտասարդական կենտրոն.....	35
Դավելված 2. Խնճային քննարկումների ուղեցույցներ.....	44

## Հապավումների ցանկ

ԱՄՅՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲԵԱ	Բաց Երիտասարդական աշխատանք
ԵԽՊ	Երեխաների խնամք և պաշտպանություն
ԵԿԾ	Եվրոպական կամավորական ծրագիր
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՌԻՒ	Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԵՐՆ	Սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարություն

## Հիմնական հասկացությունների սահմանում

Երիտասարդական աշխատանքը սոցիալական, մշակութային, կրթական կամ քաղաքական բնույթի գործողությունների ամբողջությունն է և արվում է Երիտասարդների հետ, նրանց համար: Երիտասարդական աշխատանքի հիմնական նպատակն է Երիտասարդներին հնարավորություն ընձեռել ձևավորելու իրենց ապագան<sup>1</sup>:

Երիտասարդական աշխատող՝ անձ, որն իրականացնում է Երիտասարդական աշխատանք (Երիտասարդների, Երիտասարդական խմբերի հետ տարրվող աշխատանք կամ աշխատանք, որն ուղղված է Երիտասարդության հիմնախմնդիրների լուծմանը)՝ նպաստելու Երիտասարդների անհատական, սոցիալական ու կրթական աժին, զարգացնելու նրանց ներուժը և օգնելու Երիտասարդներին լիարժեք հաստատվելու հասարակության մեջ: Երիտասարդական աշխատողը իրազեկ է Երիտասարդության իրական կյանքին, նրա տեղական պայմաններին, կարող է գնահատել իրավիճակը և Երիտասարդ մարդկանց կարիքները, ընտրել և կիրառել աշխատանքի համապատասխան մեթոդներ, իրականացնել կատարվող աշխատանքի ազդեցության վերլուծություն: Աշխատում է Երիտասարդների ու Երիտասարդական խմբերի հետ, մշակում, իրականացնում և գնահատում է Երիտասարդական ծրագրեր ու նախագծեր, համագործակցում է տարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, խմբերի և կազմակերպությունների հետ<sup>2</sup>:

Պրոֆեսիոնալ բաց Երիտասարդական աշխատանքը նաև ազիտություն է, որով գրաղվում են նաև ազիտական կրթություն ստացած և/կամ վերապատրաստված Երիտասարդական աշխատողները, որոնք հետևում են նաև ազիտական վարքագիր կանոններին, որակի չափանիշներին և վարձատրվում են իրենց կատարած աշխատանքի համար: Սա ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման իրականացման միջոցներից է: Այն տրամադրվում է համընդհանուր իմունիներով և բաց է բոլոր այն Երիտասարդների համար, որոնք կամավորության սկզբունքով ցանկություն են հայտնում նաև ազգերություններում: Այն հիմնված է Երիտասարդների ինքնուրույնությանը և հզորացմանը, ինչպես նաև քննադատական մտածողության մակարդակի բարձրացմանը միտված մանկավարժական հասկացությունների վրա<sup>3</sup>:

Երիտասարդ՝ Հայաստանի Հանրապետության 16-30 տարեկան (ներառյալ) քաղաքացի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 16-30 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձններ՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում<sup>4</sup>: Այս վերլուծության շրջանակներում Երիտասարդի տարիքը սահմանվում է 13-30 տարիքային շեմը, քանի որ Գյումրու տեղական Երիտասարդական քաղաքականության մշակման փուլում տեղական մակարդակում Երիտասարդի այդ սահմանումն է կիրառվել:

1 Glossary on youth, <https://pjp-eu.coe.int/en/web/youth-partnership/glossary/-/glossary/Y> [05.04.2019թ.]

2 ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ Կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում:

3 Professional Open Youth Work Declaration of Principles, [http://poywe.org/site/wp-content/uploads/2016/09/Declaration-of-Principles\\_Professional-Open-Youth-Work.pdf](http://poywe.org/site/wp-content/uploads/2016/09/Declaration-of-Principles_Professional-Open-Youth-Work.pdf) [05.04.2019թ.]

4 ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ Կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում:

## Ներածություն

20-րդ դարը Երիտասարդների դարն էր, երբ պատանիներն ու Երիտասարդները դարձան առավել տեսանելի որոշակի խումբ հետևյալ գործընթացների արդյունքում՝ կրթական բարեփոխումներ, պետական միջամտություն, աշխատանքային պայմանների կանոնակարգեր, անչափահասների արդարադատության համակարգի վերակազմավորում, ժամանցի ճանաչում: Այս ամենը նպաստեցին «Երիտասարդության» հայեցակարգի ստեղծման գործընթացին<sup>5</sup>:

Ի սկզբանե Երիտասարդներն առավելապես ասոցացվում, կապվում են խնդիրների հետ կամ ընկալվում են խնդիրների համատեքստում. համարվում են խնդիրներ առաջացնող կամ խնդիրներ ունեցող խումբ: Այնուամենայնիվ, Երիտասարդների ժամանակակից սահմանումներն ավելի բաց են և պայմանավորված են որոշակի համատեքստով՝ ներառելով «Երիտասարդները՝ որպես ներուժ» մոտեցումը: Այս տեսանկյունից Երիտասարդների հետ աշխատանքի՝ որպես առանձին գիտակարգի (դիսցիպլինի) և մասնագիտության ձևավորումն արդի ժամանակներում զարգացման նոր ու կարևոր փուլում է: Վիրտուալ լյանքում Երիտասարդների ակտիվ ներգրավվածությունը նրանց հետ աշխատանքը կանգնեցնում է որոշակի մարտահրավերների և նոր հնարավորությունների առջև: Օրինակ, պատահական չէ, որ Վերջին տարիներին՝ 2012թ. սկսած, շրջանառության մեջ դրվեց «թվային կամ խելացի Երիտասարդական աշխատանք» հասկացությունը, որ նշանակում է թվային տեխնոլոգիաների ակտիվ օգտագործում կամ հասցեականություն Երիտասարդական աշխատանքում:

Դաշվի առնելով Հայաստանում Երիտասարդների հետ աշխատանքի (մասնագիտական բովանդակության ողջ իմաստով) իրավիճակը, մարտահրավերներն ու հնարավորությունները՝ ուսումնասիրությունն արդիական է՝ ուղղված հասկանալու, թե ինչպիսին են այսօր Հայաստանում Երիտասարդական աշխատանքի զարգացման համար նախադրյալները<sup>6</sup>:

Ուսումնասիրության անհրաժեշտությունն առաջացել է՝ Հայաստանում բաց Երիտասարդական աշխատանքի ճանաչման ու զարգացման համար տարվող աշխատանքների իրականացմանն ուղղված ճանապարհային քարտեզի նախագծման նպատակով:

Ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու, թե որոնք են առհասարակ Հայաստանում բաց Երիտասարդական աշխատանքի իրականացման համար նախադրյալները, քարտեզագրել Երեխաների, Երիտասարդների հետ տարվող աշխատանքներում բաց Երիտասարդական աշխատանքին բնորոշ բաղադրիչների առկայությունը:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2019թ. փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում:

5 Greig A., Mackay T., and Taylor J. (2013), Doing research with children, a practical guide 3rd edition, Sage publications Ltd, Los Angeles, London, New Delhi, Singapore, Washington DC.

6 Խորհրդային ժամանակահատվածում Երիտասարդների հետ աշխատանքներ տարվել են, սակայն դրանք կրել են քարոզչական, գաղափարախոսական բնույթ և ուղղվածություն, այդ իմաստով հակասում են բուն Երիտասարդական աշխատանքի նույնացմանը (ծանոթագրությունը՝ հեղինակի):

## Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն 2018թ. հիմնել է «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը՝ Դայաստանում առաջին անգամ ներդնելով պրոֆեսիոնալ բաց երիտասարդական աշխատանքի մոդելը<sup>7</sup>:

«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը գործարկվել է «Բաց երիտասարդական աշխատանք». Գյումրիում երիտասարդների հզորացում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից և իրականացվում է վերջինիս կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացնամնը» ծրագրի փոքր դրամաշնորհային նախագծի շրջանակներում, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի և «Նետազոտական ռեսուլսների կովկասյան կենտրոն - Դայաստան» հիմնադրամ կոնսորցիոնի կողմից: Ծրագրի իրականացմանն աջակցել է նաև Գյումրու համայնքապետարանը, որը կենտրոնի համար անհատույց տարածք է տրամադրել տասը տարի ժամկետով: Կենտրոնի առաջին տարվա աշխատանքը համաֆինանսավորվել է նաև առցանց և առձեռն նվիրատվություն կատարած մոտ 50 անհատների ու կազմակերպություն-

Կենտրոնի նախին առավել մանրամասն ներկայացված է Դավելված 1-ում:

Պրոֆեսիոնալ բաց երիտասարդական աշխատանքը դեռևս նոր է ներդրվում Դայաստանում, և «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը իր տեսակի մեջ առաջինն ու միակն է, որի արդյունավետության գնահատումից զատ, Դայաստանում բաց երիտասարդական աշխատանքի զարգացման նախադրյալները հասկանալու համար կարիք կա ուսումնասիրելու նաև բաց երիտասարդական աշխատանքին հատուկ բաղադրիչների առկայությունը Դայաստանում՝ այլ ձևաչափերում իրականացվող երիտասարդական աշխատանքի համատեքստում:

Ուսումնասիրության նպատակն է՝

- ուսումնասիրել Դայաստանում երիտասարդական աշխատանքի վերաբերյալ օրենսդրական դաշտը,
- քարտեզագրել Դայաստանում երիտասարդական աշխատանքին հատկացվող պետական միջոցները,
- ներկայացնել երիտասարդական աշխատանք իրականացնող հիմնական դերակատարներին,
- մշակել առաջարկություններ՝ Դայաստանում երիտասարդական աշխատանքի զարգացման ուղղությամբ:

<sup>7</sup> «Բաց երիտասարդական աշխատանք» եզրույթին համարժեք է *centre-based open youth work*-ը:

## Ուսումնասիրության մեթոդաբանություն

Ուսումնասիրության նպատակներին հասնելու համար կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները՝

### 1. Նարգում

Իրականացվել են՝

- հարցազրույցներ առանցքային տեղեկատուների՝ «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրիում երիտասարդների հղորացում» ծրագրի թիմի ներկայացուցիչների հետ,
- խորհրդակցական հանդիպումներ երիտասարդական ոլորտի փորձագետների հետ:

Իրականացվել են խմբային քննարկումներ՝

- ՀՀ երիտասարդների,
- երիտասարդների տան շահառուների,
- երիտասարդների տան շահառուների ծնողների,
- երիտասարդների տան շահառուների ուսուցիչների հետ:

Ընդհանուր թվով ութ խմբային քննարկումներ են իրականացվել Գյումրիում, Անասիայում, Վանաձորում, Սպիտակում, Աշտարակում, Երևանում: Խանայնքների ընտրության համար հիմք են եղել ծրագրային թիմի նախնական ուսումնասիրությունները տվյալ համայնքներում բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ գործարկվող կենտրոնների հիմնադրման նախադրյալների և կարիքի վերաբերյալ:

Երիտասարդների ընտրության սկզբունքը՝ խմբային քննարկումների մասնակցության համար հրավիրվել են երիտասարդներ տարբեր սեռատարիքային և սոցիալական խնբերից:

Խմբային քննարկումների ուղեցույցները ներկայացված են Հավելված 2-ում:

### 2. Փաստաթղթերի վերլուծություն

Իրականացվել են «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրիում երիտասարդների հղորացում» ծրագրի ծրագրային փաստաթղթերի վերլուծություն, ոլորտային հետազոտությունների երկրորդային ուսումնասիրություններ, վիճակագրական տվյալների, ինչպես նաև երեխաների, երիտասարդների և կրթության ոլորտների ՀՀ օրենսդրության և պետական բյուջեի վերլուծություն:

Ուսումնասիրության սահմանափակումը: Բաց երիտասարդական աշխատանքը՝ որպես երեխաների եւ երիտասարդների հետ տարվող գործունեության տեսակ, դեռևս նոյն է ներդրվում Հայաստանում, հետեւաբար այս ուսումնասիրությունը հնարավորություն տվեց քարտեզագրելու, ուսումնասիրելու միայն ԲԵԱ-ին հատուկ բաղադրիչների առկայությունը երեխաների ու երիտասարդների հետ տարվող աշխատանքներում:

## Հայաստանում Երիտասարդական աշխատանքի օրենսդրական հիմքերը

2014թ. հաստատվեց Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը, որտեղ որպես Երիտասարդական քաղաքականության սուբյեկտ սահմանվեց «Երիտասարդական աշխատողը»<sup>8</sup>: Երիտասարդական քաղաքականության 2015թ. գերակա ուղղություն էր հայտարարվել Երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծումը, որին ուղղված իրականացվեցին մի շարք քայլեր՝

- «Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը» իրականացրեց «Երիտասարդական աշխատանքի և Երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն. ինստիտուտի ներկայիս վիճակը և կայացման հեռանկարները» հետազոտությունը<sup>9</sup>,
- հրապարակվեց «Երիտասարդական աշխատանքի միջազգային փորձի ուսումնասիրություն» գեկույցը, որի մշակումը պատվիրվեց Երիտասարդական ՀԿ-ներին<sup>10</sup>,
- «Երիտասարդական աշխատանքի կանոնակարգը»<sup>11</sup>, հաստատված ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ, 24 դեկտեմբերի, 2015թ., N56 հրամանով,
- «Երիտասարդական աշխատողների վերապատրաստման ծրագիրը», հաստատված ՀՀ սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարի 29 դեկտեմբերի, 2015թ. N301 –Ա/1 հրամանով<sup>12</sup>,
- 2016-2017թթ. յուրաքանչյուր տարի Երիտասարդական 25 աշխատող անցնում է մասնագիտական վերապատրաստում:

2019թ. փետրվարին ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրվեց «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, ըստ որի՝ ՀՀ ՍԵՐՆ միավորվելու է Կրթության և գիտության նախարարության և Մշակույթի նախարարության հետ: Այժմ Երիտասարդական ոլորտը համակարգվելու է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Սակայն դեռևս հստակ չէ, թե որոնք են Երիտասարդական քաղաքականության գերակայությունները, արդյոք Երիտասարդական աշխատանքը գտնվում է և հետագայում գտնվելու է այդ գերակա ուղղությունների շարքում, և թե ինչպիսի քայլեր են ձեռնարկվելու այդ ուղղությամբ:

<sup>8</sup> ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում:

<sup>9</sup> <http://erit.am/media/2017/04/6873.pdf>

<sup>10</sup> <http://erit.am/media/2016/12/5784.pdf>

<sup>11</sup> <http://erit.am/media/2016/09/3466.pdf>

<sup>12</sup> <http://erit.am/media/2017/11/10382.pdf>

## **Հայաստանում Երիտասարդական աշխատանք իրականացնող հիմնական դերակատարները**

Հայաստանում անկախության տարիներից ի վեր գործում են բազմաթիվ պետական և հասարակական կազմակերպություններ, որոնց հիմնական թիրախային խումբը Երիտասարդներն են, կամ գործունեության հիմնական ուղղությունն առնչվում է Երիտասարդության հարցերին: Ըստ Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կատարած հետազոտության՝ Հայաստանում Երիտասարդական աշխատանք իրականացնուն են՝

- Երիտասարդական հասարակական կազմակերպությունները,
- պետական կառույցներին կից գործող Երիտասարդական կազմակերպությունները, օրինակ, պետական քանգարաններին կից Երիտասարդական խորհուրդները<sup>13</sup>,
- քաղաքական կուսակցություններին կից գործող Երիտասարդական կազմակերպությունները,
- կրթական կառույցներին կից գործող Երիտասարդական կազմակերպություններ՝ աշակերտական և ուսանողական խորհուրդները,
- կրօնական կառույցներին կից գործող Երիտասարդական կազմակերպություններն ու միությունները,
- Երիտասարդական ակումբները, խմբերն ու միավորումները:

Սակայն պետական կառույցներն ու հասարակական կազմակերպությունները տարբեր մոտեցումներ ու ընկալումներ ունեն Երիտասարդների հետ աշխատանքի գործունեության շրջանակի վերաբերյալ, և հետաքրքրական է, թե այս կառույցներն ինչպես են հասկանում և իրականացնում Երիտասարդների հետ աշխատանքը: Օրինակ, Առաքելական եկեղեցուն և կրոնական կազմակերպություններին կից Երիտասարդական խմբերի անդամները մատնանշում են հոգևոր, մշակութային և հայրենասիրական կրթության անհրաժեշտությունը և Երիտասարդների հետ աշխատանքի գործառույթները տեսնում են այդ համատեքստում:

Խոցելի խմբերի հետ աշխատող Երիտասարդական կազմակերպության ներկայացուցիչները կարևորում են հատկապես Երիտասարդների աշխատանքի, քաղաքացիական դաստիարակության, սեփական իրավունքների մասին տեղեկացվածության և շահերի պաշտպանության գործառույթները:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ Հայաստանում Երիտասարդների հետ տարվող աշխատանքները հիմնականում իրականացվում են Երիտասարդական ՀԿ-ների կողմից,

<sup>13</sup> <http://ankakh.com/article/117746/%E2%80%8Bgfestjyeanc-patanyekan-khvorhdi-andamnyere-misht-handyes-yen-galis-hyetaqrqrakan-yev-styegehtsagvorts-nakhadzyermuthyunyervov>

որոնք ազդեցություն ունեն ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակում: Դայաստանում գործում են շուրջ 400 երիտասարդական ՀԿ-ներ, որոնց գերակշռող մասը զբաղված է երիտասարդների կարիքների բավարարմամբ, մարդու իրավունքների հարցերով, կրթության, համայնքային զարգացման, մշակույթի, առողջապահության և այլ բովանդակային հարցերով: Երիտասարդական ՀԿ-ների գործունեության հիմնական տեսակը ոչ ֆորմալ կրթության տարատեսակ միջոցառումների՝ առավել հաճախ դասընթացների կազմակերպումն է, շահերի պաշտպանությունը, իրազեկումը, սոցիալական աջակցությունը և այլն<sup>14</sup>:

Տեղական մակարդակում երիտասարդների հարցերին առնչվող մեկ այլ ինստիտուտ և առևտ է՝ չնայած բավականին բույլ ձևավորված: Խոսքը մարզաբնակչության, որոշ դեպքերում համայնքապետին կից երիտասարդական խորհուրդների մասին է: Մարզաբնակչության առընթեր երիտասարդական խորհուրդների ձևավորման գործընթացը մեկնարկեց 2014թ., երբ ՀՀ վարչապետի հրամանով ընդունվեց «Մարզաբնակչության առընթեր երիտասարդական խորհուրդների օրինակելի կանոնադրությունը»<sup>15</sup>: Իհարկե, այդ խորհուրդների ձևավորումը պարտադիր բնույթ չի կրում՝ ըստ ՀՀ օրենսդրության, սակայն օրինակելի կանոնադրության հաստատումը խթան եղավ խորհուրդների ձևավորմանն ուղղված աշխատանքների համար:

Սրհասարակ աշխարհում երիտասարդների հետ տարվող աշխատանքներում աճում է ԲԵԱ մեթոդաբանության կիրառումը<sup>16</sup>: Բաց երիտասարդական աշխատանքը ուսումնական ծրագրից դուրս իրականացվող կրթության (extracurricular), միջազգային երիտասարդական աշխատանքի, երիտասարդական խորհրդակցության (youth counselling), երիտասարդական տեղեկատվության (youth information) և երիտասարդների հետ տարվող աշխատանքների մյուս մեթոդաբանությունների շարքում լայնորեն կիրառվում է եվրոպական մի շարք երկրներում<sup>17</sup>:

Սակայն Դայաստանում ԲԵԱ դեռևս ճանաչված և ընդունված մեթոդաբանություն չէ: Այժմ երեխաների ու երիտասարդների հետ տարվող աշխատանքներում կարելի է հանդիպել ԲԵԱ-ին բնորոշ միայն որոշ բաղադրիչներ: Այս իմաստով նշենք ԲԵԱ-ի սկզբունքները՝ փորձելով հասկանալ՝ Դայաստանում ո՞ր կառույցներն են կիրառում դրանք:

<sup>14</sup> «Երիտասարդական կազմակերպությունների բարեեզագործ և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության զնամնություն», Երիտասարդական ուսումնասիրությունների հիմնարկություն, Երևան, 2014թ.:

<sup>15</sup> <http://erit.am/media/2016/06/1985.pdf> [10.04.2019թ.]

<sup>16</sup> Working with young people: the value of youth work in the European Union, Prepared by Allison Dunne, Daniela Ulicna, Ilona Murphy, Maria Golubeva, Checked by Daniela Ulicna, Margaret James, Edited by European Commission, February 2014, p. 80.

<sup>17</sup> The Socio-economic Scope of Youth Work in Europe. Study commissioned by the partnership between the European Commission and the Council of Europe in the field of Youth and conducted by the Institute for Social Work and Social Education, p. 6.

## **Պրոֆեսիոնալ բաց Երիտասարդական աշխատանքը**

1. ...բաց է բոլոր Երիտասարդների համար՝ կամավորության հիմունքներով:
2. ...հիմնված է Երիտասարդական աշխատողների ու Երիտասարդների միջև կայուն և բովանդակալից հարաբերությունների վրա, որտեղ մասնագետներն ստեղծում ու պահպանում են Վստահության դաշտ և հստակ դնում հարաբերությունների սահմանները:
3. ...իր առաջարկներն ու ծառայությունները հիմնում է մանկավարժական կուռ գիտելիքի վրա: Այն հարմարեցվում է աշխատանքի թրախ հանդիսացող անհատների ու խմբերի կարիքներին և բաց է նորարարությունների ու հաշվարկված ռիսկերի հանդեպ: Անցկացվում է համապատասխան կրթությանը Երիտասարդական աշխատողների կողմից, որոնք պատասխանատու են նաև այլ մասնագետներից և կամ կամավորներից բաղկացած աշխատանքային թիմեր առաջնորդելու համար:
4. ...ընկերական, անմիջական և ներառական մթնոլորտում իրականացվող ցածր նույոքի շեմ ունեցող պրակտիկա է, որը նաև հետաքրքիր է և զվարժակի: Այն տրամադրում է այլ Երիտասարդների հետ հանդիպելու ու ծանոթանալու բաց հարթակ, որտեղ Երիտասարդները կարող են փորձարկել իրենց գաղափարները չքննադատող և ապահով միջավայում՝ տարբեր դերային նորմելների հետ շփման և սոցիալական փոխհարաբերությունների արդյունքում, խնդիրների կամ դժվարությունների դեպքում ստանալով կարիքներից բխող աջակցություն:
5. ...կիրառում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման մեթոդներ և դրանք հարմարեցնում է աշխատանքային գործընթացներին ու Երիտասարդների կարիքներին:
6. ...որպես հիմնական աշխատանքային մեթոդ՝ հնարավորության դեպքում կիրառում է համատեղ ստեղծարար աշխատանքը:
7. ...աջակցում է Երիտասարդներին իրենց շնորհների բացահայտման, ինչպես նաև նոր հմտությունների և ունակությունների զարգացման հարցում՝ մատուցելով տարատեսակ ծառայություններ և ֆասիլիտացնելով տարաբնույթ գործընթացներ:
8. ...մասնագետներից պահանջում է գիտակցել Երիտասարդների վրա իրենց պահվածքի ազդեցությունը և դրսերել պատշաճ վարվելածներ:
9. ...նպաստում է Երիտասարդների մեջ պատասխանատվության զգացման բարձրացմանը՝ սահմանելով տվյալ միջավայրում գործող հստակ կանոններ և հնարավոր հետևանքներ՝ միաժամանակ բաց մնալով երկխոսության համար, նույնիսկ Երիտասարդների սկզբնական ձախողումների դեպքում:

10. ...արձագանքում է Երիտասարդների կարիքներին ու ծգումներին, դրանց վերաբերյալ է կարեկցանքով, Ծկունությամբ ու դրականորեն, փոխում է յուրաքանչյուր Երիտասարդի հրավիճակը, մտածելակերպը և/կամ ճգնաժամը: Սա ներառում է պրոֆեսիոնալ կապերի պահպանում և անհրաժեշտության դեպքում Երիտասարդների ուղղորդում դեպի համապատասխան ծառայություններ:
11. ...տալիս է Երիտասարդին Երկրորդ հնարավորություն՝ ստեղծելով միջավայր, որում սխալվելը բնական երևույթ է, և որտեղ դա օգտագործվում է կրթական, այլ ոչ թե անձին դատապարտելու նպատակներով:
12. ...ակտիվ դերակատարում ունի Երիտասարդների կարիքների ու հետաքրքրությունների ջատագովման և պաշտպանության գործում:
13. ...հարգում է նրանց, ում հետ աշխատում է և պահպանում Երիտասարդների անձնական տվյալների գաղտնիությունը: Յատուկ ուշադրություն է դարձնում փոխադարձ հարգանքը կարևորելուն և Երկխոսության միջոցով աջակցում է, որ Երիտասարդներն իրենք ուղիղներ գտնեն հասակակիցների ու հասարակության այլ անդամների հետ հարգալից շփման համար:
14. ...գիտակցում է Երիտասարդներին վերաբերող այլ ոլորտների հետ իր փոխարքերությունները և ակտիվ կապ է պահում համապատասխան անհատների/կառույցների հետ, որոնց հետ համագործակցում է ի նպաստ Երիտասարդների:
15. ...իր հսկ աշխատանքի հանդեպ կիրառում է քննադատական և վերլուծական մոտեցում, օգտագործում է որակական ու քանակական մեթոդներ կատարած աշխատանքը մշտադիտարկելու և գնահատելու համար՝ հատկապես արժևորելով Երիտասարդների արձագանքն ու գնահատականը:
16. ...պրոֆեսիոնալ կերպով է նկարագրում, բացատրում և հանրայնացնում իր աշխատանքը<sup>18</sup>:

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից գործարկված «Երիտասարդների տուն» բաց Երիտասարդական կենտրոնն առաջինն ու միակը, որ կիրառում է պրոֆեսիոնալ ԲԵԱ մեթոդաբանությունը: Այս ուսումնասիրությունը փորձ է բացահայտելու և քարտեզագրելու ԲԵԱ-ի բաղադրիչների, սկզբունքների առկայությունը Դայաստանում Երիտասարդների և Երիտասարդների հետ տարրեր կառույցների կողմից տարվող աշխատանքներում:

<sup>18</sup> Professional Open Youth Work Declaration of Principles, [http://poywe.org/site/wp-content/uploads/2016/09/Declaration-of-Principles\\_Professional-Open-Youth-Work.pdf](http://poywe.org/site/wp-content/uploads/2016/09/Declaration-of-Principles_Professional-Open-Youth-Work.pdf) [05.04.2019?].

Քարտեզագրումը հնարավորություն տվեց բացահայտելու, թե որ կառույցների և կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին են տեղեկացված և/կամ մասնակցում մարզերի երիտասարդները<sup>19</sup>: Ներքոնշյալ գծապատկերում ներկայացնենք այդ կառույցները՝ ըստ մարզերի:



## Գծապատկեր 2: Երեխանների և երիտասարդներին աջակցող կառույցները՝ ըստ քարտեզագրման

Ընդ որում, տեղեկացվածությունը կարևոր գործոն է երիտասարդների մասնակցության համար: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, երիտասարդների տեղեկացվածությունը տարբեր հնարավորությունների վերաբերյալ ևս ունի սոցիալ-տնտեսական պայմանավորվածություն: Հատկանշական է, որ գյուղական բնակավայրերի երիտասարդները համեմատաբար խոցելի են այս առումով, ընդ որում, գյուղական բնակավայրերի աղջիկները առավել խոցելի են<sup>20</sup>: Երիտասարդները հիմնականում հաճացանցից, ինչպես նաև ընկերներից են տեղեկանում հնարավորությունների վերաբերյալ, հետևաբար երիտասարդական տեղեկատվության ապահովումը և պետք է վերանայվի՝ Երեխանների ու երիտասարդների խոցելի խնբերին հասնելու համար:

<sup>19</sup> Քարտեզագրում չի հավակնում լինելու ներկայացուցական հետազոտություն, հետևաբար նշված ցանկը ամբողջական չէ, այլ ներկայացնում է միայն քարտեզագրման շրջանակներում իրականացված խնբային քննարկումներից ստացված տեղեկություններ (ծանրագրությունը հեղինակի):

<sup>20</sup> Սանկական աղքատությունը Հայաստանում, քազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն, 2016թ., ՍԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, էջ 58:

## Երիտասարդներին ուղղված կրթական գործընթացներ

Տարիներ շարունակ իրականացվող երիտասարդական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդների հետ տարվող աշխատանքների հիմնական նաև են կազմուն դասընթացները<sup>21</sup>: Ընդ որում, երիտասարդների հետ տարվող կրթական աշխատանքները մեծ մասամբ իրականացվում են ՀԿ-ների կողմից, ինչը ևս Հայաստանում երիտասարդական աշխատանքի ավանդույթին բնորոշ գիծ է<sup>22</sup>: Երիտասարդների հետ տարվող աշխատանքներում գերիշխում են դասընթացները՝ կարճաժամկետ և երկարաժամկետ:

Առհասարակ, ըստ խմբային քննարկումների արդյունքների, մարզերի երիտասարդները ներգրավված են կրթական տարրեր գործընթացների ոլորտ՝ ՀԿ-ների կողմից իրականացվող ակումբներ, օտար լեզուների, ռոբոտաշինության, նկարչության, սպորտային և այլ խմբակներ:

Հանդիպումներն ու քննարկումները հաջորդ գործողությունների տեսակներն են, որոնք կիրառվում են երիտասարդների հետ տարվող աշխատանքներում:

Տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրումն առավել քիչ տարածված գործողություն է երիտասարդների հետ տարվող աշխատանքներում:

Կարևոր է ընդգծել էական մի հանգամանք. սովորաբար դասընթացներին մասնակցելու համար բաց հայտարարություն է տրվում, և մասնակիցների հավաքագրումը կատարվում է դիմում-հայտերի ընտրությամբ: Բաց երիտասարդական աշխատանքի սկզբունքներից մեկը առանց նախապայմանների մասնակցության հնարավորությունն է: Այս իմաստով կարող ենք ընդհանրացնել, որ այսօր Հայաստանում քիչ են նմանատիպ՝ առանց նախապայմանների որևէ կրթական գործընթացի մասնակցության հնարավորությունները:

## Երիտասարդներին տրամադրվող ժամանցային հնարավորություններ

Երիտասարդներն ավելի շատ ազատ ժամանակ ունեն, քան մեծահասակները, հետևաբար երիտասարդների կողմից ազատ ժամանակի կառավարումը երիտասարդական ուսումնասիրությունների առարկա է: Բազմաթիվ տեսաբաններ՝ Ֆրեյդ, Միհ, Պիամե, ընդգծում են ազատ ժամանակի, խաղի կարևորությունն անձի զարգացման, ինքնության զարգացման տեսանկյունից<sup>23</sup>: Երիտասարդների հետ տարվող աշխատանքում ժամանցի կազմակերպումը և կարևոր ուղղություն է, հետևաբար և հետազոտման տիրույթ:

Համաձայն Կրթության նախին ՀՀ օրենքի՝ արտադրողական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպմանը նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է և նպատակառուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակու-

<sup>21</sup> Երիտասարդական աշխատանք և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն, ԵՌԻ, 2015թ.

<sup>22</sup> A history of youth work in Armenia, by Areg Tadevosyan and Howard Williamson.

<sup>23</sup> Key Concepts in Youth Studies, M. Cieslik and D. Simpson, Sage publications, 2013, p. 61.

թյանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը<sup>24</sup>: Արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, մարզադպրոցների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, բնասերների և այլ խմբակների, ճանքարմների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

Հայաստանում Երիտասարդներն ազատ ժամանակի կառավարման առունով բավականին խոցելի են, քանի որ, օրինակ, մշակութային մասնակցության տեսանկյունից մարզերում բավականին քիչ են հնարավորությունները՝ ենթակառուցվածքների բացակայության կամ առկայության դեպքում դրանց վճարովի լինելու հանգանաքով պայմանավորված: Որոշ մարզերում միայն մարզկենտրոններում (Գյումրի, Վանաձոր, Կապան, Էջմիածին) են գործում թատրոններ, կինոդահլիճներ, իսկ գյուղական համայնքներում, մարզի այլ քաղաքներում ենթակառուցվածքները գրեթե բացակայում են:

Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2017-2018 ուսումնական տարում՝ հնարապետությունում գործել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի և մանկապատանեկան ստեղծագործության 225 դպրոց և կենտրոն՝ ընդգրկելով բոլոր մարզերը, սակայն ոչ հավասարապես<sup>25</sup>:

Արտառուսումնական ծրագրեր իրականացվում են հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից, սակայն դրանց մասին հավաստի վիճակագրական տվյալները բացակայում են, մասնավորապես՝ հաճախող երեխաների սեռատարիքային, մարդագային բաշխումը: Երեխաների ժամանցի, մշակութային կյանքին մասնակցելու ոչ պետական կենտրոններում ներգրավման մասին ևս հավաստի տվյալներ չկան<sup>26</sup>:

Որպես ազատ ժամանակի կազմակերպման վայր՝ կարևոր դերակատարություն ունեն գրադարանները, սակայն Հայաստանի մարզերում գրադարաններն արդիականացված չեն. թարմացված չեն թե՝ գրականությունը, թե՝ գրադարանների ու ընթերցարանների ողջ ենթակառուցվածքը, գրադարաններում առկա չեն համացանց, համակարգչներ, էլեկտրոնային գրադարաններ և այլն:

Մարզերում Երիտասարդների համար ժամանցային վայր են այգիները, սրճարանները: Վերջին տարիներին որոշ մարզերում ստեղծվել են հակասրժարաններ, որոնք տարածված ծևաչափեր են և ծառայում են նաև որպես երիտասարդների հավաքատեղի: Ըստ խմբային քննարկման արդյունքների՝ որոշ մարզերում, սակայն, ննանատիպ սրճարաններից կարողանում են օգտվել միայն տղաները: Առհասարակ մարզերում ժամանցի կազմակերպման առումով առավելապես խոցելի են աղջիկները. Երեկոյան ժամերին կազմակերպվող միջոցառումներին նրանք հաճախ չեն կարողանում մասնակցել, մարզի որևէ քաղաքում առկա որոշ վայրեր չեն կարող հաճախել: Մարզերում Երիտասարդների հիմնական մասը բնակվում է ծնողների հետ, ինչը պայմանավորված է ֆինանսական և տնտեսական կախ-

<sup>24</sup> ՀՀ օրենքը կրության մասին, ընդունվել է 14.04.1999. <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1494> [11.04.2019թ.]

<sup>25</sup> [https://www.armstat.am/file/article/sv\\_03\\_18a\\_5160.pdf](https://www.armstat.am/file/article/sv_03_18a_5160.pdf). [11.04.2019թ.]

<sup>26</sup> Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն, Հայաստան, Սեյկ դր Զիլդրեն, Երևան, 2015թ.:

վածությամբ, որոշ դեպքերում նաև սոցիալ-մշակութային համատեքստով<sup>27</sup>: Որպես հետևանք՝ ծնողները փորձում են կառավարել երիտասարդների առօրյան, այդ թվում ժամանցը:

Երիտասարդների հետ աշխատանքում կարևոր դեր ու տեղ ունեն խաղերը: Երիտասարդների հետ աշխատող մասնագետները մշտապես կիրառում են բազմաթիվ խաղեր նրանց հետ աշխատանքներում: Ընդ որում, խաղերը կիրառվում են ոչ միայն ազատ ժամանակի կազմակերպման, այլ նաև կրթական նպատակով: Խաղն առհասարակ ունի բավական մշակութային ազդեցություն:

Ինչպես նշում է Յ. Դայգինգան, խաղի առաջին հիմնական հատկանիշն այն է, որ ազատ է, ազատություն է<sup>28</sup>: Այս իմաստով, խաղը՝ որպես երիտասարդների հետ աշխատանքի կարևոր գործիք, վերահնատավորնան, վերազնահատման կարիք ունի: Թեև վերջին տարիներին Դայաստանում բավականին զարգացել են խաղերի ստեղծման ավանդույթն ու հիմն հայկական ավանդական խաղերի արդիականացման գործընթացը, միջազգային ճանաչում ունեցող խաղերի թարգմանությունն ու ադապտացումը տեղական շուկային, այնուամենայնիվ այժմ կարիք կա խորությամբ գնահատելու երիտասարդների հետ տար-վոր աշխատանքներում խաղերի ազդեցությունը, զարգացնելու և բարելավելու խաղերի կիրառման նոտեցումները:

Մշակութային մասնակցությունը, ազատ ժամանակի կազմակերպումը կարևոր և խնդրա-հարույց են հատկապես սոցիալապես խոցելի խմբերի երեխաների ու երիտասարդների համար:

Դայաստանում հատկապես 15-17 տարեկանների կեսը խոցելի է ժամանցի առումով, ընդ որում, գյուղական բնակավայրերի երեխաներն ավելի խոցելի են<sup>29</sup>:

Ուսումնասիրության շրջանակներում, երիտասարդների շրջանում իրականացված խմբա-յին քննարկումների արդյունքների համաձայն, երիտասարդական կազմակերպություն-ների կողմից մշակվում և իրականացվում են միջոցառումներ՝ ուղղված երիտասարդնե-րի ժամանցի ապահովմանը հաստատությունից դուրս: Որպես ժամանցային միջոցառում-ներ նշվում են՝

- ժամբարները,
- արշավները,
- խաղերի կազմակերպումը,
- հաճախումը մշակութային վայրեր և այլն:

<sup>27</sup> Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, գեկույց, Գյումրի, 2015թ.:

<sup>28</sup> Homo Ludens, Յ. Դայգինգա, Երևան, 2007թ., էջ 17:

<sup>29</sup> Մանկական արդատությունը Դայաստանում, բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն, 2016թ., ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ:

Որպես բացօթյա (outdoor) աշխատանք՝ ուղղված Երիտասարդների ազատ ժամանակի կազմակերպմանը, Երիտասարդների ու Երիտասարդական աշխատողների կողմից ընդգծվեց ճամբարների, արշավների և խաղների դերը: Օրինակ, ճամբարները կամ արշավները հնարավորություն են տալիս Երիտասարդներին զարգացնելու մի շարք հմտություններ՝ արտակարող իրավիճակում հայտնվելու փորձ, ինքնասպասարկման մշակույթ, ինքնուրույնության զգացում, անկախության ձեռքբերում և այլն:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում, չնայած մի շարք պետական և ոչ պետական ծրագրերի ու ջանքերի, երեխաների և Երիտասարդների ժամանցի կազմակերպումը դեռևս ունի խնդիրներ՝ պայմանավորված ինչպես անհրաժեշտ Ենթակառուցվածքների պակասով, այնպես էլ սոցիալ-տնտեսական գործոններով:

## **Երիտասարդական նախաձեռնությունների խթանում**

Վերջին հինգ տարիների ընթացքում նկատվում է դրական դիմանիկա Երիտասարդական նախաձեռնությունների քանակի և որակի մեջ՝ պայմանավորված մի շարք գործոններով: Իրականացվում են պետական ու հասարակական մի շարք ծրագրեր՝ ուղղված Երիտասարդական նախաձեռնությունների խրախուսմանը: Որպես պետական ծրագրի օրինակ՝ կարող ենք նշել ՀՀ ՍԵՐՆ Կողմից իրականացվող «100 գաղափար Հայաստանի համար» հանրապետական Երիտասարդական մրցույթը»: Ըստ էության, «մրցույթն անցկացվում է Երիտասարդների նորարարական մտածողությունը զարգացնելու, ՀՀ սոցիալ- տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում Երիտասարդներին ներգրավելու, գիտատեխնիկական մշակումներ և նորարարական նախագծեր իրականացնելու քաղաքացիական նախաձեռնությունների խթանման նպատակով»<sup>30</sup>: Մրցույթին մասնակցելու համար նաև նախակիցները պետք է դիմում-հայտ ներկայացնեն, որում նանրամասն պետք է նկարագրեն նորարարական նախագիծը, դրա արդիականությունը, նորույթի ու յուրահատկությունը, իրականացման նպատակն ու դրա միջոցով լուծվելիք խնդիրները, նորարարական ծրագրի առավելությունները և բնութագիշ այլ տեղեկություններ: Թեև ծրագրի գնահատումը բացահայտել է մի շարք խնդիրներ, որոնք մատնանշել են հենց ծրագրի մասնակից Երիտասարդներ՝ գաղափարի իրականացման համար հետագա աջակցության բացակայություն, ֆինանսական միջոցների սղություն, այնուամենայնիվ որպես նորարարական մտքի խրախուսման, մտքերի գեներացման հարթակ՝ ծրագրից կարողացել է դրական ազդեցություն ունենալ Երիտասարդական նախաձեռնությունների խրախուսման տեսանկյունից:

Երիտասարդական նախաձեռնությունների վրա էական ազդեցություն ունի ստարտափերի էկոհամակարգը: Վերջին մի քանի տարիների ընթացքում հիշյալ էկոհամակարգը ՀՀ ում բավականին զարգացել է՝ ներգրավելով էկոհամակարգի մոդելի տարրեր սուբյեկտներին, սակայն նկատվում է, որ այն դեռ գտնվում է ակտիվացման փուլում, ինչը փաստում

<sup>30</sup> ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության մոմիթորինգ և գնահատում, Երևան, 2017թ.:

Են արագ զարգացող տարբեր նախաձեռնությունները<sup>31</sup>: Ստարտափ էկոհամակարգի զարգացումը Դայաստանում պայմանավորված է տարբեր կառույցների ակտիվ դերով: ԵՄ-ը, ըստ փորձագիտական կարծիքների, հիմնականում ֆինանսավորման աղյուր է Դայաստանի ստարտափ էկոհամակարգի զարգացմանն ուղղված տարբեր ծրագրերի, նախաձեռնությունների համար: ՀՀ-ում ստարտափ էկոհամակարգի զարգացմանն ուղղված ծրագրեր է իրականացնում նաև ՄԱԿ-ը: ՄԱԿ-ի նախաձեռնություններն են «Կոլբա» նորարարական լաբորատորիան, ինչպես նաև ԻՄՓԱՔԹ-ի աքսելերատորը, որի նպատակն է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ զարգացնել և ընդլայնել ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացմանն ուղղված ձեռնարկությունները: Ստարտափերի զարգացման համար նաև բարենպաստ պայմաններ են ստեղծվում ՀՀ Կառավարության կողմից, մասնավորապես, «Տեղեկատվական տեխնոլոգիաների ճյուղում պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն, տեղեկատվական տեխնոլոգիաների ճյուղում սկսնակ ընկերությունները (ստարտափ), որոնք ունեն մինչև 30 աշխատակից, ստանում են հարկային արտոնություններ՝ պարտավորվելով վճարել միայն 10% եկամտահարկ: Վերջին շրջանում տարբեր կառույցների կողմից իրականացվում են տարատեսակ ծրագրեր, որոնք ուղղված են զարգացման տարբեր փուլերում գտնվող ստարտափերին, մասնավորապես՝ Beeline startup incubator, EPIC (Entrepreneurship and Product Innovation Center), ISTC IBM:

Գաղափարների գեներացիայի, իրականացմանն ուղղված աջակցության համար հետաքրքր հարթակ է նաև «Օսմ» հիմնադրամը (Awesome Foundation)<sup>32</sup>, որը համընդհանուր բնույթ կրող միավորում է և կոչված է աշխարհում ամենախենք գաղափարների առաջնորդականը՝ յուրաքանչյուր մրցույթային շրջափուլում 1000 ԱՄՆ դոլար հատկացնումով:

«Օսմ»-ի յուրաքանչյուր անկախ մասնաճյուղ աջակցում է ամենահետաքրքրի նախագծերի իրագործմանը սովորաբար ամսական կտրվածքով հատկացվող միկրո դրամաշնորհների միջոցով: Այս դրամաշնորհները՝ 1000 ԱՄՆ դոլար կամ տեղական արժույթով համարժեք գումար, հավաքագրվում են հոգաբարձուներից և հատկացվում մասնակիցներին, որոնք աշխատում են «օսմ» (հիմնալի) նախագծերի իրագործման ուղղությամբ, առանց որևէ պարտավորության: Որպես այդպիսին, «օսմ» նախագծերն ընդգրկում են տարբեր բնագավառների լայն շրջանակ՝ ներառյալ արվեստի, տեխնոլոգիաների, համայնքային զարգացմանն ուղղված գաղափարներ:

«Վորլդ Վիժն» Դայաստանի կողմից իրականացվող ուշագրավ հարթակ է ԻՄՓԱՔԹ-ի ուսումնական ծրագրը: ԻՄՓԱՔԹ ակումբում կիրավող Դամայնքային ծառայության ուսումնական ծրագրը յուրահատուկ տեսական առարկա է, օգտագործում է համայնքային ծառայության ծրագրերը հատուկ ուսումնական նպատակներին հասնելու, սովորական պատասխանատվություն և առողջ բարոյական արժեքներ ձևավորելու համար: Որպես ԻՄՓԱՔԹ ծրագրի հիմք՝ համայնքային ծառայության ուսումնական ծրագրի մեթոդոլոգիաները ձևավորում են պայմաններ ԻՄՓԱՔԹ-ի նպատակի իրականացման համար, այն է՝ երիտասարդության հզորացում հասարակական փոփոխությունների համար:

<sup>31</sup> Ստեղծարար տնտեսության ոլորտներում երիտասարդների զարգացման ներուժը, ԵՌԻԻ, Երևան, 2018թ.:

<sup>32</sup> <https://www.awesomefoundation.org/hy/chapters/yerevan>

ԻՄՓԱՔԹ-ի ուսումնական ծրագրի կառուցվածքի հիմքում են չորս հիմնական բաղադրիչներ, որոնք նաև արտացոլում են հիշյալ ծրագրի հիմնական նպատակները՝

- ակտիվ քաղաքացիություն,
- աշխատունակություն,
- սոցիալական ձեռներեցություն,
- առաջնորդություն:

2019թ. սկզբին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակը միավորեցին իրենց ջանքերը Հայաստանում ներդնելու ՅՈՒՆԻՍԵՖ-ի գլոբալ «UPSHIFT» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրությունը: ՅՈՒՆԻՍԵՖ-ի «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում 12-18 տարեկան դեռահասների նախաձեռնողականության և քաղաքացիական ակտիվության բարձրացնան՝ վերջիններիս ներգրավելով իրենց համայնքների կյանքի որակի բարելավմանն ուղղված գործընթացների ոլորտ: Ծրագրի ուղղակի շահառուներն են Գյումրի և Սպիտակ քաղաքներից 12-18 տարեկան 50 պատանի: Պատաճներն ընտրվելու են տարբեր դպրոցներից, քոլեջներից, ուսումնական/կրթական/մշակութային հաստատություններից: Ծրագրի անուղղակի շահառուներն են Գյումրի և Սպիտակ քաղաքներից 12-18 տարեկան մոտ 500 դեռահաս և ուսուցիչներ, որոնք հնարավորություն կունենան մասնակցելու տարբեր հաստատություններում կազմակերպվելիք դասընթացներին և տեղեկատվական հանդիպումներին: «UPSHIFT Հայաստան» ծրագիրը ներառում է դեռահասների զարգացման, սոցիալական նորարարության և ձեռնարկատիրության առաջատար մոտեցումների տարրեր՝ նպատակ ունենալով դեռահասների մեջ զարգացնելու սոցիալական նորարարության և ձեռնարկատիրության հնտություններ: UPSHIFT-ը երիտասարդներին և դեռահասներին սովորեցնում է բացահայտել իրենց համայնքների խնդիրները, մշակել արդյունավետ լուծումներ՝ տվյալ խնդիրների լուծման և համայնքներում կյանքի որակն ավելի բարեկեցիկ դարձնելու համար:

Չնայած նմանատիպ հնարավորություններին նարգերի երիտասարդների նախաձեռնությունների իրականացման համար սակավարիվ են հնարավորությունները: Ինչպես փաստում են խնբային քննարկումների արդյունքները, երիտասարդները, ունենալով որևէ գաղափար, միտք, ոչ միշտ են կարողանում գտնել աջակիցներ դրանց իրականացման համար: Երիտասարդական նախաձեռնությունների, մտքերի մշակման գործում աջակցում են նրանք այն հանգամանքով, որ համայնքապետարանները չունեն ֆինանսավորման մեխանիզմներ նախագծերի իրականացման հարցում: Ըստ խմբային քննարկումների, երիտասարդների նախաձեռնությունների համար պահանջվող ֆինանսավորման չափերով պայմանավորված, դպրոցը ևս հաճախ չի կարողանում աջակցել երիտասարդներին: Որպես հետևանք՝ երիտասարդին մոտ գտնվող հիմնական կառույցները՝ դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություն, համայնքապետարան, չունեն ֆինանսավորման մեխանիզմներ՝ երիտասարդների գաղափարների ու նախաձեռնությունների իրականացման համար:

Երիտասարդական նախաձեռնությունների, առհասարակ նախաձեռնողականության վրա էական էին նաև 2018թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում քաղաքացիական ակտիվության դրսնորումները, որտեղ մեծ էր երիտասարդների դերակատարությունը: Դասարակությունը դեռևս չի տվել վերջնական ու խորքային գնահատական այդ գործընթացներին երիտասարդների իրական դերակատարման վերաբերյալ, համրային դիսկուլսը կիսվել է, մի մասի կարծիքով, այդ գործընթացներին երիտասարդների մասնակցությունն աննախադեպ էր, մյուս մասի կարծիքով, այդ գործընթացներին օգտագործվել և կիրառվել է երիտասարդների ներուժը: Տեղին է մեջբերել երիտասարդների մասնակցության սանդուղքը, որի միջոցով հնարավոր է հասկանալ, թե որքանով է այս կամ այն գործողությունը իրական երիտասարդական մասնակցության նախաձեռնության արդյունքը<sup>33</sup>:

Մասնակցություն	<b>VIII աստիճան.</b> Երիտասարդները նախաձեռնում են և որոշումներին ընդունում են մեծահասակների հետ համատեղ:
	<b>VII աստիճան.</b> Երիտասարդները նախաձեռնում են և որոշում:
	<b>VI աստիճան.</b> Երիտասարդները մասնակցում են մեծահասակների նախաձեռնության որոշումներին:
	<b>V աստիճան.</b> Երիտասարդները ինֆորմացվում են, և նրանց հետ խորհրդակցում են:
	<b>IV աստիճան.</b> Երիտասարդները ինֆորմացվում են:
Ոչ մասնակցություն	<b>III աստիճան.</b> Երիտասարդները մասնակցում են որպես ընդօրինակում (հմիտացիա):
	<b>II աստիճան.</b> Երիտասարդները օգտագործվում են որպես դեկորացիա:
	<b>I աստիճան.</b> Երիտասարդները մանիպուլացվում են:

Գծապատկեր 1: Երիտասարդների մասնակցության սանդուղքը

<sup>33</sup> Children's participation, from tokenism to citizenship, Roger A. Hart, Copyright . 1992 UNICEF International Child Development Centre Spedale degli Innocenti Florence, Italy, [https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens\\_participation.pdf](https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens_participation.pdf) [12.04.2019]

Զերծ մնալով քաղաքական որևէ գնահատականից և տարընթերցումներից խուսափելու նպատակով՝ կարող ենք միայն փաստել, որ 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած քաղաքացիական և քաղաքական գործողություններին երիտասարդների մասնակցությունը նշանակալի ազդեցություն է բողել հենց երիտասարդների նախաձեռնողականության, մասնակցության փորձառության վրա: Քետագոտությունները տարիներ շարունակ ցույց են տվել, որ երիտասարդների քաղաքական, քաղաքացիական մասնակցությունը բավականին պասիվ է, իսկ 2018թ. գարնան դեպքերը նոր փուլ բացեցին երիտասարդական մասնակցության պատմության մեջ, ինչը, իհարկե, պատշաճ, խորթային և մասնագիտական վերլուծության կարիք ունի:

Երիտասարդների մասնակցության վրա էական ազդեցություն ունի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման աճը, ինչը հնարավորություն է տալիս մասնակցելու հասարակական գործընթացներին՝ անկախ ժամանակային ու տարածական որոշակիությունից: Վերջին տարիների երիտասարդական ուսումնասիրությունները ևս անդրադառնում են այս հարցին՝ այժմյան երիտասարդներին անվանելով թվային բնիկներ<sup>34</sup>: Թվային բնիկ արտահայտությունն ուղենշում է երիտասարդների նկարագրի նոր հորիզոններ: Երիտասարդների թվային ակտիվությունն էականորեն ազդել և շարունակում է ազդել նրանց մասնակցության վրա: Այս ինաստով պետք է նշել նաև այն բոլոր հնարավորությունները, որոնք ստեղծվել և ստեղծվում են Հայաստանի մարզերում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հմտությունների ձեռքբերման համար՝ ԹՈՒՄԾ կենտրոններ, «Արմաթ» լաբորատորիաներ և այլն:

Երիտասարդական նախաձեռնությունների վրա էական է նաև կամավորության մշակութի ազդեցությունը:

Ըստ 15-29 տարիքային խմբի երիտասարդների շրջանում 2016թ. իրականացված հարցման տվյալների՝ երիտասարդների միայն 16,9%-ն է վերջին 12 ամիսներին իրականացրել չվճարվող կամավորական աշխատանք<sup>35</sup>:

Այսպիսով, ըստ երիտասարդների շրջանում իրականացված հետագոտության արդյունքների, երիտասարդության փոքր հատվածն է ընդգրկված հասարակական/կամավորական գործունեության մեջ, իսկ ընդգրկվածների մի ստվար զանգվածի համար կամավորական աշխատանք իրականացնելու շարժադրմերն առավել ռացիոնալ բնույթ ունեն (ընդգենալով գրադված լինելու, մասնագիտական գիտելիքներ կիրառելու, նոր ընկերությ ձեռքբերելու և հնարավոր գործառուների հետ համբաւելու ցանկությունը) և հազվադեպ են պայմանավորված այլոց օգնելու նտադրությամբ:

Երիտասարդության ոլորտի ներկայացուցիչները, երիտասարդները ևս փաստում են, որ երիտասարդների միայն մի մասն է ընդգրկված կամավորական աշխատանքներում: Ընդուում, ակտիվ, նախաձեռնող երիտասարդներն ունեն կամավորական փորձ, իսկ երիտասարդների մի ստվար զանգված, որը պասիվ է հասարակական կյանքում, կամավորության փորձ չունի:

<sup>34</sup> Perspectives on youth, Young people in a digitalised world, Volume 4, Council of Europe, May, 2018, p.11.

<sup>35</sup> Անկախության սերունդ, երիտասարդական ուսումնասիրություն, ֆ. Եբերս հիմնադրամ, 2016թ, Երևան:

Կարող ենք եզրակացնել, որ այսօր բազմաթիվ են Երիտասարդների նախաձեռնությունների խրախուսման մեխանիզմները, որոնք հիմնականում ոչ հավասարաչափ են բաշխված մարզերում, բացի դրանից՝ Երիտասարդներին առավել մոտ կանգնած կառուցները չունեն նախաձեռնությունների խրախուսման ներդրված մեխանիզմներ:

Երիտասարդական ոլորտի ներկայացուցիչները նշում են առողջ աշխատանքի կարևորությունը՝ հատկապես սոցիալական տարրեր խմբերի Երիտասարդների ներգրավման տեսանկյունից: Օրինակ, Երիտասարդական աշխատողները, «Երիտասարդների տուն» բաց Երիտասարդական կենտրոնի նասին Երիտասարդներին տեղեկացնելու, կենտրոնի աշխատանքներին ծանոթացնելու նպատակով հնարավոր շահառուների հետ իրենց ծանոթությունն սկսել են բակերից՝ նրանց հետ տարրեր խաղեր խաղալով, որի շնորհիվ ձևավորվել է վստահության մթնոլորտ: Խմբային քննարկումները ցույց տվեցին, որ նման մոտեցումներ կիրառվում են նաև Երիտասարդական ոլորտի ՀԿ-ների կողմից:

Այսպիսով, քարտեզագրումը հնարավորություն տվեց բացահայտելու, որ այսօր Հայաստանում դեռևս զարգացած չէ բաց Երիտասարդական աշխատանքը, սակայն վերջինիս բնորոշ տարրեր բաղադրիչներ հանդիպում են Երիտասարդների և երեխաների հետ իրականացվող աշխատանքներում: Հիմնականում ԲԵԱ-ին բնութագրական կրթական և ժամանցային գործընթացներն են տարածված, իսկ անհատական աշխատանքները, արտակենտրոնային աշխատանքները, հատկապես երեխաների և Երիտասարդների ներգրավման փուլում, քիչ են կիրառվում:

## Հայաստանում Երիտասարդական աշխատանքին հատկացվող Փիլանսական ռեսուրսները

Հասկանալու համար, թե ինչպիսին է Երիտասարդական աշխատանքը Հայաստանում, անդրադառնանք նաև պետական ու միջազգային ֆինանսական միջոցներին, որոնք ապահովում են Երիտասարդների հետ տարվող աշխատանքները:

Բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի եւ միջոցառումների անվանումները	Գումարը
Սպորտի և Երիտասարդության հարցերի բնագավառում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիթորինգ, քաղաքականության մշակում և դրա կատարման համակարգում, պետական ծրագրերի պլանավորում, մշակում, իրականացում և մոնիթորինգ (վերահսկում)	425,222.90
Երիտասարդական պետական քաղաքականության ուղղված ծրագրեր և միջոցառումներ. հասարակական կյանքին Երիտասարդների ակտիվ մասնակցության, Երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության խթանում, Երիտասարդների զբաղվածության հնարավորություններ	304,727.40
Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքին դեմ պայքարի միջոցառումներ	9,600.00
Աջակցություն Երիտասարդ ընտանիքներին. «Երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարաններ» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում	663,860.00
Նախագորակոչային և զորակոչային տարիքի Երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում	7,000.00

Գծապատկեր 4. ՀՀ պետական բյուջեում ՀՀ սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարության հատկացումները<sup>36</sup> (հազ. դրամ)

Երիտասարդներին հատկացվող պետական ֆինանսական միջոցներ են առկա նաև այլ նախարարությունների հատկացումներում:

<sup>36</sup> Անկախության սերունդ, Երիտասարդական ուսումնասիրություն, Ֆ. Էբերտ իիմնադրամ, 2016թ, Երևան:

<b>Բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի եւ միջոցառումների անվանումները</b>	<b>Գումարը</b>
Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում	237,995.7
Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ	505,105.6
Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ	74,667.30
Երեխաների ու ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ	303,590.20
Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող սոցիալական հոգածության ծառայություններ	4,444.50
Համայնքային ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաների համար	4,888.90
Համայնքային ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար	7,111.20
Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ	24,055.60

**Գծապատկեր 5. ՀՀ պետական բյուջեում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի  
նախարարության հատկացումները<sup>37</sup> (հազ. դրամ)**

<sup>37</sup> ՀՀ Օրենքը ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին, ընդունված 2018թ. նոյեմբերի 22, էջ 125:

Երիտասարդներին ուղղված ֆինանսական միջոցների առկայությունը կարելի է ուսումնասիրել նաև ՀՀ բյուջեում կԳՆ հատկավող տողերում։ Այսպես՝

<b>Ծախսային հողվածը</b>	<b>Գումարը</b>
Նախնական (արիեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	11,685,448.70
Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության ծրագիր	10,351,017.00
Կրթության և գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	887,718.50
Հանրակրթության ծրագիր	87,259,771.00
<b>Արտադրոցական դաստիարակության ծրագիր</b>	<b>4,132,285.00</b>
Ապահով դպրոց	1,170,125.70
Կրթության որակի ապահովում	9,897,726.30
Համընդիանուր ներառական կրթության համակարգի ներդրում	1,590,482.50

**Գծապատկեր 6. ՀՀ պետական բյուջեում ՀՀ կրթության և գիտության նախարարության հատկացումները<sup>38</sup> (հազ. դրամ)**

Ընդ որում, երիտասարդական աշխատանքի իրականացման տեսանկյունից արտադրոցական դաստիարակության ծրագրի համար հատկացվող գումարը՝ 4,132,285.00 ընդհանուր թվով, բաշխված է հետևյալ կերպ՝

<b>Ծախսային հողվածը</b>	<b>Գումարը</b>
Արտադրոցական դաստիարակություն	2,861,760.40
Մանկապատանեկան մարզական խաղերի անցկացում	9,300.00
Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացում	32,550.00
Դպրոցականների անառաջին հանգստի կազմակերպում	480,624.00
Արտադրոցական դաստիարակություն ՀԿ-ների կողմից	626,311.00
Մարզիչ-մանկավարժների վերապատրաստում	7,244.00
«Հակոբ Կոջոյան» կրթահամալիրում արտադրոցական դաստիարակության կազմակերպում	7,547.80
Դպրոցական գրադարանային ֆոնդի համալրում	44,352.00
Ուսումնամարզական գործընթացների իրականացում մարզադպրոցներում	62,595.80
<b>Ընդամենը</b>	<b>4,132,285.00</b>

**Գծապատկեր 7. Արտադրոցական դաստիարակության ծրագրին ուղղվող պետական միջոցները՝ ըստ հիմնական ուղղությունների (հազ. դրամ)**

<sup>38</sup> ՀՀ Օրենքը ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին, ընդունված 2018թ. նոյեմբերի 22, էջ 157։

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ գծապատկերներից, Հայաստանում առկա են բավարար ֆինանսական միջոցներ՝ Երիտասարդներին ուղղված աշխատանքներ կատարելու նպատակով՝ հիմնված նրանց կարիքների վրա: Հավելված 1-ում ներկայացված Երիտասարդական տան օրինակով կարող ենք համեմատել համայնքահեն Երիտասարդական կենտրոն ունենալու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները պետական միջոցների հետ: Այսպես, եթե Հայաստանում գործող ցերեկային 5 կենտրոնի համար, որտեղ ընդգրկված երեխաների ընդհանուր թիվը 570 է<sup>39</sup>, պետական միջոցներից հատկացվում է 237.995.700 ՀՀ դրամ, ապա Երիտասարդների տանը մեկ տարի 600 Երիտասարդի ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ է շուրջ 44, 6 եվրոյին համարժեք ՀՀ դրամ (մեկ երեխայի/Երիտասարդի հաշվով), ներառյալ նաև կամավորական աշխատանքին և տարածքին առնչվող ընթացիկ ներդրումների գումարը, որից միայն 30,70 եվրոն է, որ իրական գումար է՝ առանց օգուտների: Այսինքն՝ 600 շահառուի հաշվարկով նման կենտրոնի գործառնության համար անհրաժեշտ է շուրջ 10 մլն ՀՀ դրամ, որը ցերեկային կենտրոններին հատկացվող ֆինանսական միջոցներից մի քանի անգամ ավելի պակաս գումար է: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ ցերեկային խնամքի ծառայություններում ներառված է նաև սմնդի համար հատկացվող գումարը, սակայն Երիտասարդական կենտրոնն իր հերթին մատուցում է երեխաների, Երիտասարդների կարիքների վրա հիմնված անհատական ծառայություններ: Նետևաբար, նման հաշվարկներն առավել հիմնավորված տնտեսագիտական վերլուծության պետք է ենթարկել:

Համայնքներում Երիտասարդական աշխատանքը ՀԿ-ներին պատվիրակելու հնարավորությունների մասին կարող ենք խոսել՝ ներկայացնելով նաև նարզագետարանների և համայնքապետարանների բյուջեները: Համայնքներն ունեն շահույթ չիետապնդող կազմակերպություններին բյուջետային աջակցության հատկացումներ: Գյումրի քաղաքի օրինակով, կարող ենք նշել, որ խոսքը 18 մլն ՀՀ դրամի մասին է: Վանաձոր քաղաքի համայնքային բյուջեում առկա է 3 մլն ՀՀ դրամ Երիտասարդական ծրագրերի իրականացման, 5 մլն ՀՀ դրամ՝ քաղաքական կուսակցությունների, ՀԿ-ների, արհմիությունների համար, ինչպես նաև 22 մլն ՀՀ դրամ՝ հանգստի, մշակույթի և կրոնի համար<sup>40</sup>: Այսինքն՝ համայնքում Երիտասարդական կենտրոնի ծախսերը կարող են ապահովվել բյուջետային այս տողի միջոցներով:

Երիտասարդության ոլորտում ակտիվ դերակատարություն ունեն նաև միջազգային դուռը կազմակերպությունները՝ թե՝ ուղղակի ծրագրեր իրականացնելու ձևաչափով, թե՝ Երիտասարդական ՀԿ-ներին դրամաշնորհներ տրամադրելով: Զեա դեռևս որևէ քարտեզագրում, թե վերջին տարիներին որքան ֆինանսական միջոցներ են տրամադրվել Երիտասարդների ուղղությամբ Հայաստանում դրոնոր կազմակերպությունների կողմից<sup>41</sup>:

Վերջին տարիներին ԵՄ-ը Հայաստանում հանդես է գալիս որպես Երիտասարդական ոլորտի հիմնական դոնորներից մեկը: Արհասարակ, Եվրամիության համար Երիտասարդական քաղաքականությունը կարևոր ռազմավարական ուղղություն է: ԵՄ-ը Երիտասարդական ոլորտում աշխատում և աջակցում է հետևյալ ուղղություններին՝

<sup>39</sup> [http://www.mlsa.am/?page\\_id=4384](http://www.mlsa.am/?page_id=4384)

<sup>40</sup> [http://vanadzor.am/hamaynqi\\_byuge/](http://vanadzor.am/hamaynqi_byuge/) [12.04.2019г.]

<sup>41</sup> Եվրամիության կողմից նման նախաձեռնությունը՝ քարտեզագրել 2014-2019 թթ. Երիտասարդական ծրագրեր, դեռևս ընթացքի մեջ է (ձանորդագրությունը՝ հեղինակի):

1. գբաղվածություն,
2. սոցիալական ներառում,
3. մասնակցություն,
4. կրթություն և վերապատրաստումներ,
5. առողջություն և բարեկեցություն,
6. կամավորական գործունեություն,
7. երիտասարդություն և աշխարհ,
8. ստեղծարարություն և մշակույթ<sup>42</sup>:

Երիտասարդությունը ԵՄ ֆինանսավորման կարևոր ուղղություններից մեկն է 2014-2020 թթ.: Եվրոպական հանձնաժողովը 2016թ. մշակեց և գործարկեց “EU4Youth programme” ծրագիրը Արևելյան գործընկերության երկրների համար, որի ֆինանսական հատկացումը ԵՄ կողմից կազմում է 26 մլն Եվրո<sup>43</sup>:

EU4Youth ծրագրի նպատակներն են՝

- բարձրացնել երիտասարդության մասնակցությունը և գբաղվածությունը հասարակության ու տնտեսության մեջ,
- աջակցել երիտասարդներին՝ դառնալու ակտիվ քաղաքացիներ ու ձեռնարկատերներ, և զարգացնել նրանց հմտությունները,
- հնարավորություն տալ երիտասարդական կազմակերպություններին մասնակցելու քաղաքական երկխոսություններին և համագործակցել պետական ու մասնավոր կառույցների հետ,
- աջակցել սահմանափակ կարողություններ ունեցող երիտասարդներին ու կանանց:

EU4Youth ծրագրի շրջանակներում որպես ուղղություն՝ երիտասարդական նախաձեռնություններին աջակցությունն է, ինչը կարևոր տեղ ունի ԲԵԱ-ում:

Չնայած երիտասարդական ՀԿ-ներին տրամադրվող առևտություններին՝ պետական և միջազգային աղբյուրներից, այդ ՀԿ-ները բավականին խոցելի են ֆինանսական կայունության տեսանկյունից:

<sup>42</sup> Mapping youth transitions to work in the eastern partnership countries, Armenia, ETF, 2018.

<sup>43</sup> [https://eeas.europa.eu/delegations/armenia/41675/eu-launches-new-projects-under-eu4youth-grant-scheme-armenia\\_en](https://eeas.europa.eu/delegations/armenia/41675/eu-launches-new-projects-under-eu4youth-grant-scheme-armenia_en) [10.04.2019?.]

## Եզրակացություն

Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս կատարելու մի շարք եզրահանգումներ Դայաստանում ԲԵԱ-ում առկա վիճակի և զարգացման նախադրյալների վերաբերյալ, ընդ որում եզրահանգումները հիմնված են տարբեր մեթոդներով և տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա:

### Երիտասարդների արդի խնդիրները և երիտասարդական աշխատանքի առկա վիճակը

- Երիտասարդները որպես առաջնային խնդիր նշում են գրաղվածությունը, ժամանցի հնարավորությունների պակասը, ինքնադրսության, ազատ տարածքների, ստեղծարարության խրախուսման, մասնագիտական կողմնորոշման և զարգացման հարթակների բացակայությունը: Երիտասարդների կողմից մատնանշվում են հաղորդակցության միջոցների (տրանսպորտային, տեղեկատվական) պակասը:
- Երիտասարդական ոլորտը չի ընկալվում որպես կարևոր ու գերակա ուղղություն, ինչը, ըստ երիտասարդական ոլորտի աշխատողների, դրսնորվեց ՀՀ ՍԵՐՆ օպտիմացմամբ:
- Երիտասարդների հետ աշխատանքը համակարգման, կարգավորման կարիք ունի՝ ընդհանուր կանոններ, սկզբունքներ, աջակցության շրջանակներ սահմանելու առումով:
- Տեղական մակարդակում երիտասարդների հարցերին առնչվող զարգացած ինստիտուտներ չեն գործում. հանայնքապետարաններում չկան երիտասարդական աշխատողներ և երիտասարդության հարցերում մասնագիտացած պատասխանատուններ, հանայնքապետարաններին կից երիտասարդական խորհուրդներ չկան, կամ եթե կան, պասիվ գործունեություն են ծավալում, ուսումնական հաստատություններում տարբեր աշխատանքները հաճախ չեն հիմնվում երիտասարդական աշխատանքի սկզբունքների վրա:
- Երեխաների և երիտասարդների հետ աշխատանք իրականացնող հիմնական կազմակերպությունները Դայաստանի մարզերում շարունակում են մնալ ՀԿ-ները, ինչպես նաև արվեստի ու սպորտի դպրոցները, որոշ դեպքերում նաև կրոնական կազմակերպություններին կից գործող երիտասարդական կառույցները:
- Ակտիվ գործող կառույցները երեխաների ու երիտասարդների համար հիմնականում առաջարկում են հետևյալ կարճաժամկետ և միջնաժամկետ հնարավորությունները՝ դասընթացներ, ակումբներ, մեկանագամյա միջոցառումներ, մրցույթներ, արշավներ, ժամբարներ, ժամանցային տարբեր միջոցառումներ:
- Կրթական ու ժամանցային հնարավորությունների վերաբերյալ երիտասարդները հիմնականում տեղեկանում են համացանցից ու ընկերներից:
- Մարզերում երիտասարդների նախաձեռնությունների խրախուսման համար սահմանափակ հնարավորություններ են գործում:

- Սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաները խոցելի են նաև ժամանցային հնարավորություններից օգտվելու, ենթակառուցվածքների պակասի ու տեղեկացվածության առումով:
- Երիտասարդների տուն բաց Երիտասարդական կենտրոն հաճախած երեխաները, նրանց ծնողները և ուսուցիչները նշել են երեխաների վրա կենտրոնի դրական ազդեցությունների մասին հաղորդակցության, ինքնաճանաչման հմտությունների ձեռքբերում, ինքնավստահություն, փորձ ձեռք բերելու հնարավորություն:
- Կենտրոնի շահառուները, ինչպես նաև ծնողները և ուսուցիչները նշում են, որ կարևոր է կենտրոնի գործունեության շարունակականությունը, քանի որ երեխաները և Երիտասարդները հաճույքով են հաճախում կենտրոն, զգալի են նրանց մեջ դրական փոփոխությունները:
- Ուսումնասիրության մասնակցած մյուս համայնքների Երիտասարդները, ինչպես նաև Երիտասարդների հետ աշխատող մասնագետներն ընդգծեցին Երիտասարդական տաճ նման կենտրոնի առկայության կարևորությունն ու անհրաժեշտությունը իրենց համայնքներում:

## Առաջարկություններ

Ուսումնասիրության արդյունքների և հիմնական եզրակացությունների հիման վրա կմշակվեն առաջարկություններ Հայաստանում բաց Երիտասարդական աշխատանքի զարգացման համար:

- Իրականացնել Երեխաներին ու Երիտասարդներին ուղղված աշխատանքների ազդեցության համապարփակ և խորքային գնահատում:
- Երիտասարդների հետ տարվող աշխատանքներում ավանդական մոտեցումներին զուգահեռ կիրառել նորարար մոտեցումներ:
- Կրթական ծրագրերին զուգահեռ կարևորել և թիրախավորել ժամանցային միջոցառումները:
- Երիտասարդական աշխատանքում կիրառվող մոտեցումները պարբերաբար գնահատման, վերլուծության և զարգացման կարիք ունեն, ինչին ուղղված կարիք կա ստեղծելու Երիտասարդական աշխատողների փոխազակցման հարթակներ՝ Երիտասարդական աշխատողների ասցիացիայի նախատիպով:
- Մարզերում կարիք կա ստեղծելու, գործարկելու Երիտասարդական կենտրոններ, որտեղ Երիտասարդներին հնարավորություն կտրվի ազատ ստեղծագործելու, իրենց զաղափարները կյանքի կոչելու համար ստանալ աջակցություն:
- Երիտասարդական կենտրոնների հիմնադրման գործընթացն իրականացնել առավելագույնս բաց, թափանցիկ ու մասնակցային՝ համախմբելով պետական, համայնքային ողջ ներուժը՝ մարդկային, նյութական և ֆինանսական:

Ուսումնասիրությունը իրականացվել է մասնակցային սկզբունքով, հետևաբար Երիտասարդական կենտրոնների հիմնադրման վերաբերյալ առաջարկությունները ներկայացնեն՝ ըստ Երիտասարդների կարծիքների:

Ապագա Երիտասարդական կենտրոնների գործառույթների շրջանակը՝ ըստ քարտեզագրման արդյունքների՝

- ◆ մասնագիտական կողմնորոշում,
- ◆ անվճար տարածք՝ 7/24 ռեժիմով,
- ◆ ժամանցային հնարավորություններ՝ ստեղծագործական, Երաժշտական, սպորտային խմբակներ,
- ◆ ոչ ֆորմալ կրթական հնարավորություններ, քննարկումներ,
- ◆ հայոց լեզվի, օտար լեզուների, համակարգչային հմտությունների դասընթացներ,

- ◆ Խաղերի, միջոցառումների անցկացում,
- ◆ Խորհրդատվություն, աջակցություն Երիտասարդ մասնագետների կողմից, ընդ որում և արական, և՝ իգական սերի,
- ◆ Ինքնասպասարկման սնվելու հնարավորություն,
- ◆ Կենտրոնն ունենա հստակ մշակված ընթացակարգեր, օրակարգ, կանոնները գործեն բոլորի համար հավասար:

#### **Ապագա Երիտասարդական կենտրոնների ենթակառուցվածքը**

- ◆ Շենքը լինի Երիտասարդներին հասանելի, հաճախու, անաղմուկ վայրում:
- ◆ Արտաքին տեսքը լինի տարբերվող, գունավոր, գրավիչ, ժամանակակից, Երիտասարդների բնորոշմամբ՝ «Լոֆտոտ տարածք»:
- ◆ Սենյակները լինեն թեմատիկ՝ իրենց բնորոշ գույքով, գույներով, ներսի պատերը՝ լվացվող, որպեսզի հնարավոր լինի գրելուց հետո մաքրել:
- ◆ Լինեն դասընթացների սրահ ու հանգստի սենյակ, խաղասենյակ, համակարգչային, ռոբոտաշինության սենյակ, ընթերցարան, պարապահ, երաժշտություն լսելու, ֆիլմ դիտելու սենյակներ, նկարչական սենյակ, ֆիլմի նկարահանման սենյակ, սպորտդահլիճ (ֆուտբոլի, բասկետբոլի դահլիճ), հեծանվային վագբռուղի, հրաձգարան:
- ◆ Կենտրոնն ունենա ինքնասպասարկման խոհանոց, լողանալու հնարավորություն:
- ◆ Ունենա բակային խաղերի հատված, ֆուտբոլի, վոլեյբոլի դաշտ:
- ◆ Կենտրոնն ապահովված լինի համացանցով, նոր տեխնոլոգիաներով, թարմացվող գրադարանով, երաժշտական գործիքներով, աստղադիտակով, գրենական պարագաներով, նյութերով, խաղերով:
- ◆ Սենյակներում աթոռների փոխարեն այլ բաներ լինեն, կամ գետնին նստելու հնարավորություն լինի:

Իհարկե, հետագայում Երիտասարդական կենտրոնների հիմնադրման գործընթացը պետք է սկսի այս կենտրոնների տեսլականի շուրջ ծավալվող մասնագիտական ու մասնակցային քննարկմանք, որտեղ վերոնշյալ դրույթները կվերանայվեն ըստ մասնագիտական և հիմնավորված գնահատականների:

Այսպիսով, քարտեզագրումը հնարավորություն տվեց բացահայտելու Հայաստանում Երիտասարդական աշխատանքի արդի նոտեցումները, կիրառվող հիմնական գործիքակազմը, ինչպես նաև վեր հանելու Երիտասարդների խնդիրներն ու կարիքները, որոնց թիրախավորմանն ուղղված առաջարկություններ ևս ներկայացվել են:

## Օգտագործված գրականության եւ փաստաթղթերի ցանկ

1. Անկախության սերունդ, Երիտասարդական ուսումնասիրություն, ֆ. Երերտ հիմնադրամ, Երևան, 2016թ.:
2. Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Յայաստան, Սեյվ դը Չիլդրեն, Երևան, 2015թ.:
3. Երիտասարդական աշխատանք և Երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն, ԵՌԻՒ, Երևան, 2015թ.:
4. Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող Երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում, ԵՌԻՒ, Երևան, 2014թ.:
5. Երիտասարդական աշխատանքը Յայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ, Երիտասարդական աշխատանքի միջազգային փորձի ուսումնասիրություն, ավարտական գեկույց, վերլուծություններ և առաջարկություններ, Երևան, 2015թ.:
6. Homo Ludens, Յ. Յազինգա, Երևան, 2007թ.:
7. A history of youth work in Armenia, by Areg Tadevosyan and Howard Williamson, 2011
8. Greig A., Mackay T., and Taylor J. (2013), Doing research with children, a practical guide 3rd edition, Sage publications Ltd, Los Angeles, London, New Delhi, Singapore, Washington DC.
9. Perspectives on youth, Young people in a digitalised world, Volume 4, Council of Europe, May, 2018.
10. Key Concepts in Youth Studies, M. Cieslik and D. Simpson, Sage publications, 2013, p. 61.
11. The Socio-economic Scope of Youth Work in Europe. Study commissioned by the partnership between the European Commission and the Council of Europe in the field of Youth and conducted by the Institute for Social Work and Social Education.
12. Working with young people: the value of youth work in the European Union, Prepared by Allison Dunne, Daniela Ulicna, Ilona Murphy, Maria Golubeva, Checked by Daniela Ulicna, Margaret James, Edited by European Commission, February 2014.

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված 1.

**Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի  
«Երիտասարդների տուն» բաց Երիտասարդական կենտրոն**

#### I. Կենտրոնի մասին

«Երիտասարդների տուն» բաց Երիտասարդական կենտրոնը բաց Երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող առաջին Երիտասարդական կենտրոնն է Հայաստանում:

Կենտրոնը Գյումրիում 13-ից 18 տարեկան Երիտասարդներին առաջարկում է ծառայություններ, որոնք միտված են բարձրացնելու Երիտասարդների ինքնազնահատականը, նպաստելու նրանց ինքնակայացմանը, կյանքի հմտությունների և աշխատանքային նրգունակության կարողունակությունների ուսուցմանն ու հմտությունների զարգացմանը:

Կենտրոնը՝ որպես հարթակ, ծառայում է նաև թեմատիկ քննարկումների, սեմինարների, դասընթացների, որոնք ուղղված են Երիտասարդների հետ աշխատող մասնագետների և ոլորտով հետաքրքրվող անձանց կարողությունների զարգացմանը:

«Երիտասարդների տուն» բաց Երիտասարդական կենտրոնը գործարկվելու է «Բաց Երիտասարդական աշխատանք. Գյումրիում Երիտասարդների հզորացում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի փոքր դրամաշնորհային նախագծի շրջանակներում, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» հիմնադրամ կոնսորցիումի կողմից: Ծրագրի իրականացմանն աջակցում է նաև Գյումրու համայնքային քայլարանը, որը կենտրոնի համար անհատույց տարածք է տրամադրել տասը տարի ժամկետով: Կենտրոնի առաջին տարվա աշխատանքը համաֆինանսավորվում է նաև առօցանց և առձեռն նվիրատվություն կատարած մոտ 50 անհատների ու կազմակերպությունների կողմից:

Կենտրոնը համագործակցում է քաղաքացիական հասարակության կառույցների, ուսումնական հաստատությունների, երեխաների խնամքի կենտրոնների, սոցիալական ծառայությունների, ուսումնականության, տեղական ինքնակառավարման և պետական մարմինների, լրատվամիջոցների ու մասնավոր սեկտորի հետ:

## **II. Կենտրոնի շահառուներ**

Կենտրոնի առաջնային շահառուներ են 13-18 տարեկան երիտասարդները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, ֆիզիկական կարողություններից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից: Նախատեսվում է կենտրոնը հարմարեցնել հենաշարժողական խնդիրներ ունեցող երիտասարդներին:

Կենտրոն այցելող մինչև 16 տարեկան անչափահասների համար սահմանված է հատուկ աշխատանքային կանոնակարգ, որի համաձայն՝ երիտասարդի հետագա մուտքը պայմանավորված է խնամակալի համաձայնությամբ: Կենտրոն տարեկան հաճախելու են մոտ 600 երիտասարդներ, որոնք կազմում են Գյումրիում այդ տարիքային խնդիրի 6%-ը: Կենտրոն օրական հաճախում է միջինը 30 շահառու:

Կենտրոնի երկրորդային շահառուներ են երիտասարդների հետ կամ երիտասարդական ոլորտում աշխատող մասնագետները, ներառյալ երիտասարդական հասարակական կազմակերպությունների աշխատակիցները, ավագ դպրոցի ուսուցիչները, վարչական աշխատակազմը, սոցիալական աշխատողներն ու հոգեբանները, ոլորտային հետազոտողները, կամավորները, իրավապահ մարմինների, բժշկական հաստատությունների և այլ հարակից ոլորտների աշխատակիցները:

## **III. Կենտրոնի կողմից իրականացվող գործառույթներ**

Կենտրոնն իրականացնում է երկու հիմնական գործառույթ՝

1. Երիտասարդական աշխատանքի ծառայություններ՝ հիմնված բաց երիտասարդական աշխատանքի սկզբունքների ու մեթոդաբանության վրա,
2. մասնագիտական կարողությունների զարգացում երիտասարդների հետ կամ երիտասարդական ոլորտում աշխատող անձանց համար:

Կենտրոնը բաց է յուրաքանչյուր շաբաթ՝ երեքշաբթից շաբաթ օրերին,

Երիտասարդների համար՝ 14:00-17:30 (շաբաթ օրերին՝ սկսած 13:00-ից)՝ խոչընդոտ չիանդիսանալով նրանց հիմնական կրթական գործընթացներին: Տվյալ ժամերին երիտասարդները կարող են ազատ ելումուտ ունենալ կենտրոն, առանց որևէ ժամային սահմանափակման կամ պարտավորության,

այցելուների համար (ծնողներ, համագործակից կառույցների ներկայացուցիչներ և այլ շահագործի անձինք)՝ 09:30-18:00,

մասնագիտական կարողությունների զարգացման համար՝ 09:30-14:00, ինչպես նաև կենտրոնի ոչ աշխատանքային օրերի ընթացքում:

Կենտրոնի համար մշակված է հատուկ կանոնակարգ, որի համաձայն՝ իրականացվում են կենտրոն հաճախող երիտասարդների տվյալների հավաքագրում և տվյալների գաղտնիության ապահովում: Տվյալներն օգտագործվում են միայն կենտրոնի գործունեության շրջանակներում:

## **1. Երիտասարդական աշխատանքի ծառայություններ**

Կենտրոնում տրամադրվող երիտասարդական աշխատանքի ծառայությունները դասակարգվում են ըստ հետևյալ տեսակների:

### **1.1 Ինքնակազմակերպվող, ժամանցային եւ կրթական գործընթացներ**

- Պատանեկան գրադարանից ազատ օգտվելու հնարավորություն (Յավելված 6),
- Ժամանցային և զարգացնող խաղեր՝ սեղանի ու համակարգչային խաղեր, կարառվե, բակային խաղեր, որոնք նպաստում են թիմային աշխատանքին, փոխհանագործակցությանն ու մտքի ճկունությանը,
- Ինքնուրույն դասապատրաստումներ՝ օգտագործելով կենտրոնի տարածքն ու ռեսուրսները,
- Խոհանոցից օգտվելու հնարավորություն:

### **1.2 Պարբերական բնույթ կրող կրթական գործընթացներ**

- Համակարգչային բազային գիտելիքների ակումբ՝ շաբաթական երկու անգամ, մեկ ժամ տևողությամբ. անցկացվում են ԵԿԾ և տեղական կամավորների կողմից:
- Երաժշտական ակումբ՝ շաբաթական երկու անգամ, մեկ ժամ տևողությամբ. անցկացվում են ԱՄՆ խաղաղության կորպուս Հայաստանի կամավորի կողմից:
- Անգլերեն լեզվի ակումբ սկսնակների և միջին մակարդակների համար՝ յուրաքանչյուր շաբաթական երկու անգամ, մեկ ժամ տևողությամբ. անցկացվում են ԵԿԾ և տեղական կամավորների կողմից:
- Ռուսաց լեզվի ակումբ՝ շաբաթական երկու անգամ, մեկ ժամ տևողությամբ:
- Աղջիկների առաջնորդության և հեծանվավարության ակումբ. անցկացվում են մայիսից սեպտեմբեր ամիսներին՝ շաբաթական երկու անգամ:
- Ֆիլմի դիտումներ. կազմակերպվում և անցկացվում են շաբաթական մեկ անգամ երիտասարդական աշխատողի կողմից:

Կենտրոնում կազմակերպվող ակումբների ցանկը պարբերաբար փոփոխվում է:

### **1.3 Մեկանգամյա բնույթ ունեցող կրթական եւ ժամանցային գործընթացներ**

- Աշխատարաններ՝ ոչ ֆորմալ կրթական մեթոդներով, մեկուկես ժամ տևողությամբ թեմատիկ հանդիպում-քննարկումներ, որոնք անցկացվում են երիտասարդական աշխատողների, փորձնակների և տարբեր կամավորների կողմից:

- Թեմատիկ շաբաթներ. ամբողջ շաբաթը նվիրվում է որոշակի թեմայի՝ ներառելով ֆիլմի դիտումներ, աշխատարաններ, թեմայի ամփոփիչ խաղեր (օրինակը տե՛ս Հավելված 7):
- Ուսումնական այցեր. երիտասարդների համար կազմակերպվում են ուսումնա- ճանաչողական այցեր գործընկեր կառույցներ՝ նպատակ ունենալով նպաստել նրանց հետագա ներգրավվածությանը տարբեր կառույցներ:
- Մասնակցություն տարբեր միջոցառումների. կենտրոնի երիտասարդներն ակ- տիվ մասնակցություն ունենալու համար կազմակերպվում են ունենում հանրային և կենտրո- նի կողմից կազմակերպվող միջոցառումներին ու նախապատրաստական աշխա- տանքներին:

#### **1.4 Երիտասարդների նախաձեռնողության խթանում**

- Կամավորական աշխատանքի հնարավորություն. կենտրոնի երիտասարդները հնարավորություն ունեն որպես կամավոր ընդգրկվելու տարբեր գործընթացնե- րում և կենտրոնի կողմից կազմակերպվող, և կենտրոնից դուրս՝ գործընկեր կա- ռույցներում:
- Անհատական և խմբային նախաձեռնությունների աջակցություն. երիտասարդա- կան աշխատողների ուղղորդմամբ երիտասարդները իրականացրել են տա- րաբնույթ միջոցառումներ:
- Դամայնքային նախաձեռնությունների մասնակցություն և իրականացում. կարևորելով երիտասարդների ակտիվ մասնակցությունը՝ աջակցել համայնքա- յին խնդիրների լուծմանը և իրականացնել ծրագրեր ու միջոցառումներ:

#### **1.5 Անհատական երիտասարդական աշխատանք**

- Անհատական հանդիպումներ անցկացնել երիտասարդների կարիքների բացա- հայտման ու առաջընթացի գնահատման համար:
- Անձնական և մասնագիտական խորհրդատվություն. երիտասարդների հետ պար- բերաբար կազմակերպել անհատական հանդիպումներ՝ հասկանալու առկա խնդիրները և համատեղ լուծումներ գտնելու, ինչպես նաև կազմակերպել հան- դիպումներ մասնագիտության կողմնորոշման նպատակով:
- Աջակցություն միջանձնային հարաբերությունների ձևավորմանը և կոնֆլիկտնե- րի հաղթահարմանը՝ կարևորելով մինյանց նկատմամբ հարգանքի ու փոխօգնու- թյան գաղափարը, պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկումներ կենտրոնի երիտասարդների հետ:

## **1.6 Աշխատանք կենտրոնի տարածքից դուրս**

- Առւթիչ աշխատանք. կենտրոնի հարակից թաղերում երիտասարդական աշխատողների կողմից պարբերաբար կազմակերպվում և իրականացվում են այցեր, հանդիպումներ երիտասարդների հետ՝ կենտրոն ներգրավելու նպատակով:
- Թաղային երիտասարդական աշխատանք. այցելություն հարակից թաղեր և տեղում երիտասարդական աշխատանքի կազմակերպում:
- Շարժական երիտասարդական աշխատանք. նախատեսվում է երիտասարդական աշխատողների կողմից սեփական ռեսուրսների (տեխնիկական միջոցներ, սեղանի և բակային խաղեր) միջոցով իրականացնել երիտասարդական աշխատանք տարբեր համայնքներում:

Աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնում մշտապես ներկա են երիտասարդական երկու աշխատող: Նրանք երիտասարդներին ծանոթացնում են կենտրոնում առկա ծառայություններին և դրանցից օգտվելու կարգին, ուղղորդում են նրանց և ապահովում թվարկված ծառայությունների որակյալ տրամադրումը:

## **2. Մասնագիտական կարողությունների գարզացում**

### **2.1 Կարողությունների եւ հմտությունների գարզացում**

Կենտրոնն առաջարկում է կարողությունների և հմտությունների գարզացման հնարավորություններ թե՛ երիտասարդական աշխատողների, երիտասարդական ծրագրերի համակարգողների, ուսուցիչների, հոգեբանների, կամավորների, թե՛ ոլորտով հետաքրքրվողների համար՝ կազմակերպելով աշխատարաններ, դասընթացներ, ճանաչողական այցերի շարք: Կենտրոնում կազմակերպվող դասընթացների թեմատիկ շրջանակը կարող է փոխվել՝ կենտրոնի հնարավորություններով ու կարիքներով պայմանավորված:

### **2.2 Մասնագիտական գրադարան**

Կենտրոնը հնարավորություն է տալիս երիտասարդական ոլորտով հետաքրքրվող անձանց օգտվելու ԵՏ մասնագիտական գրադարանի գրքերից, որոնք հավաքագրվել են գործընկեր կառույցների նվիրատվությունների շնորհիվ: Գրադարանը բազմաթիվ կարող է (Հավելված 6):

### **2.3 Մասնագիտական փորձաշրջանի հնարավորություն**

Սոցիալական աշխատողները, ոչ ֆորմալ կրթության դասընթացավարները, ուսուցիչները և գրասենյակային աշխատողները ԵՏ-ը կարող են գործնականում կիրառել և հարստացնել իրենց տեսական գիտելիքները՝ կազմակերպելով մի շարք միջոցառումներ, կրթական ծրագրեր, աշխատարաններ երիտասարդների համար, ինչպես նաև իրականացնել գրասենյակային աշխատանք:

## **2.4 Տարածքի ու ռեսուրսների տրամադրում**

Կենտրոնի տարածքն ու ռեսուրսները կարող են տրամադրվել այլ անձանց և կազմակերպությունների՝ մասնագիտական դաշնութացներ ու հանդիպումներ անցկացնելու համար: Դյուրընկավող կառույցի ու անձանց կարողությունների զարգացման միջոցառումները պետք է համահունչ լինեն կենտրոնի գործունեության նպատակներին ու սկզբունքներին (Դաշտելված 8): Կենտրոնի տարածքն ու ռեսուրսները կարող են տրամադրվել ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով, որի համար Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»-ի կողմից նշակվելու է Երիտասարդների տանը տրամադրվող վճարովի ժառայությունների ցանկ:

## **IV. Կենտրոնի ռեսուրսները**

### **1. Մարդկային ռեսուրսներ**

Կենտրոնի կանոնավոր գործունեությունն իրականացնելու համար առաջնային է արհեստավարժ և նվիրված աշխատակազմի առկայությունը: Կենտրոնի աշխատակազմը կարելի է բաժանել հետևյալ ենթախմբերի՝

- վարչական (ադմինիստրատիվ) աշխատակազմ (կենտրոնի համակարգող, վարչական աշխատակից),
- երիտասարդական աշխատողներ,
- կանավորներ,
- փորձնակներ:

Կենտրոնի ողջ անձնակազմը՝ ներառյալ կամավորներն ու փորձնակները, պետք է իրազեկ լինի երիտասարդական աշխատանքի սկզբունքներին, տեսակներին, ինչպես նաև հետևի մասնագիտական վարքագծի կանոններին:

Կենտրոնի աշխատակազմի հետագա պլանավորման համար առաջարկվում է ներգրավել տնտեսություն և տնտեսվար-այգեպանի, որի գործառույթներն առայժմ իրականացնում է կենտրոնի աշխատակազմը:

### **2. Նյութատեխնիկական ռեսուրսներ**

Կենտրոնի շինության 93քառ.մ և բակի 310քառ.մ ընդհանուր մակերեսով տարածքը, որը Գյումրու համայնքապետարանի «Լիլիթ» մանկապարտեզի մաս է կազմում, ունի ընդհանուր ցանկապատում և կենտրոնի համար առանձնացված մուտք:

Կենտրոնի շինությունն ունի 6 սենյակ՝ յուրաքանչյուրն առանձին գործառույթով՝

- ընդունարան-գրադարան,
- դասընթացների սենյակ (մինչև 25 անձի համար նախատեսված),

- համակարգչային սենյակ,
- խաղերի սենյակ,
- վարչական սենյակ,
- խոհանոց,
- բակ:

## **V. Կենտրոնի գործունեության արտաքին գնահատում**

Կենտրոնի գործունեության առաջին չորս ամիսներից հետո իրականացվել է ազդեցության գնահատում «Բաց Երիտասարդական աշխատանք. Գյումրիում Երիտասարդների հզորացում» ծրագրի գործընկեր Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի կողմից:

«Երիտասարդների տուն» բաց Երիտասարդական կենտրոնն իր առաջին շահառուներին հյուրընկալել է 2018թ.-ի ապրիլի 30-ին: Եվ իրականացված գնահատումն արտացոլելու է 4 ամսվա՝ ապրիլի 30-ից օգոստոսի 10-ն ընկած ժամանակահատվածը:

Գյումրիում «Երիտասարդների տուն» բաց Երիտասարդական կենտրոնի գործարկումն ամփոփելով՝ հարկավոր է հաշվի առնել այն, որ կենտրոնը նախապես պլանավորված 10 ամսվա փոխարեն գործել է 5 ամիս: Այդպիսով, նախապես պլանավորված, 13-18 տարեկան 600 անհատ պատանի շահառուների թվին հասնելու փոխարեն, կենտրոնն ունեցել է 259 անհատ շահառու առաջին 4 ամսվա ընթացքում: Սա արդեն իսկ հաճախումների բավական բարձր շեմ է: Կենտրոնի գործարկման աշխատանքների զգալի հետաձգումը պայմանավորված է եղել որոշակի օրենսդրությունը (կենտրոնի կառուցման և վերանորոգման ծավալներ, պայմանագրային խնդիրներ):

Մեռերի հավասարության գործոնը հաշվի առնելով՝ վերլուծության արդյունքում երևում է, որ սկզբնական շրջանում երկու սերերի շահառուների միջև քանակային տարբերությունը բավականին մեծ է եղել, որը, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում կրծատվել է: Երկարաժամկետ շահառուների պատկերը գնահատելով՝ կարելի է արձանագրել, որ աղջիկների ու տղաների քանակը մոտ է, եթե ոչ հավասար:

Ձեկույցի համաձայն՝ կենտրոնի ծառայություններից օգտվող շահառուների գերակշիռ մասը հաճախում է հիմնական դպրոց և խոցելի խմբերի ներկայացուցիչ է: Կենտրոնը տրամադրել է տարած և բազմաթիվ ծառայություններ՝ ստեղծելով այնպիսի բարենպաստ միջավայր, որտեղ նրանք կարող են շփվել իրենց հասակակիցների հետ, անցկացնել օգտակար ժամանց և, ամենակարևորը, բարելավել իրենց համակարգչային գրագիտությունը, սովորել անգլերեն և ներգրավել համայնքային աշխատանքներում:

Կենտրոնի հիմնական շահառուների բավարարվածության բարձր աստիճանը տեսանելի է. դրա վկայությունն են թիմային աշխատանքի «Ծատ լավ» գնահատականը (97%) և այն իրողությունը, որ նրանց մեծ մասը (84%) խորհուրդ կտա ընկերներին հաճախել Երիտասարդների տուն:

Գնահատումը ցույց է տվել նաև, որ կենտրոնի առաջին ամիսների գործունեությունը համապատասխանել է ի սկզբան նախատեսված չափորոշիչներին կամ դրա ճանապարհին է.

- Կենտրոնի ուղղակի շահառուների առնվազն 50%-ն աղջիկ է:
- Կենտրոնի ուղղակի շահառուների առնվազն 75%-ը 18 տարեկանից ցածր երիտասարդ է:
- Կենտրոնի ուղղակի շահառուների առնվազն 50%-ն առերեսվում է ֆինանսական, սոցիալական, ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, կրթական և/կամ աշխարհագրական մարտահրավերների:

Կարևոր է նշել, որ թեև այս վերլուծությունն անվանվել է ազդեցության գնահատման վերլուծական գեկույց, այն իրական ազդեցության գնահատում համարելու համար անհրաժեշտ է ունենալ կենտրոնի գործարկման առավել երկար ժամկետներ և վերլուծել ավելի շատ տվյալներ: Այս հետազոտությունն առավելապես կենտրոնի գործունեության միջանկյալ գնահատում է: Յետևաբար կենտրոնի հաջող գործարկումը շարունակելու համար անհրաժեշտ կլինի պետական և միջազգային տարրեր կառույցների աջակցությունը:

Գնահատման վերլուծական գեկույցն ամբողջությամբ հասանելի է [www.yic.am](http://www.yic.am) կայքում:

## **VI. Կենտրոնի ծախսերի եւ օգուտների վերլուծություն**

Կենտրոնի հիմնադրման և գործունեության առաջին հինգ ամիսներից հետո (ընդամենը 12 ամիս) իրականացվել է ֆինանսական արդյունավետության գնահատում «Բաց Երիտասարդական աշխատանք. Գյումրիում Երիտասարդների հզորացում» ծրագրի գործընկեր Յետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի կողմից:

Արդյունքները հակիրճ՝ ստորև.

- Մարդկային ռեսուրսների մասով արված ծախսերը 12 ամիսների համար կազմել են 22.720 եվրո, որ ներառել է ծրագրի դեկավարի, հաշվապահի, ծրագրի հետազոտական բաղադրիչի համակարգողի, կենտրոնի համակարգողի, Երիտասարդական աշխատողների և ծրագրի օգնականի աշխատավարձերը: Մարդկային ռեսուրսների մասով ունեցած հավելյալ արժեքը (օգուտը) կազմել է 9.180 եվրո՝ կամավորական աշխատանքի տեսքով:
- Կենտրոնի տարածքի ծախսերը կազմել են տարածքի վերանորոգման, անվտանգության համակարգի ներդրման, կահույքի, թվային տեխնիկայի, կենցաղային տեխնիկայի, կենտրոնի կոմունալ ծախսերի և կապի միջոցների վճարումների, ծրագրի գործընկերների գրասենյակային ծախսերի մասնակի փոխհատուցման տողերը՝ ընդամենը 24.745 եվրո:
- Կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ զարգացման միջոցները (խաղեր), ինչպես նաև գրենական պիտույքներն ու ծախսանյութերը կազմել են 1.803 եվրո:

- Այլ ծախսեր՝ ներառյալ ճանապարհաճախսերը և վարչական (ադմինիստրատիվ) ծախսերը կազմել են 2.477 եվրո:
- Կենտրոնի գործարկման տարում ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 51.745 եվրո՝ առանց օգուտների հաշվարկի:
- Ծրագիրն ունեցել է 9.180 եվրո օգուտ՝ մարդկային ռեսուրսների մասով, որը հաշվարկվել է կենտրոնի վարչական աշխատակցի, ծրագրի օգնականի, աշխատարանների ուսուցանողների, ծրագրի խորհրդատուի և ծրագրի հանրայինացման համար կատարված անհատույց աշխատանքի աշխատաժամանակի արժեքից:
- Կարենոր ոչ ֆինանսական օգուտ (ներդրում) է կենտրոնի ծախսերի մասով հաշվարկված 4.660 եվրոն, որի մաս է կազմում անհատույց օգտագործվող տարածքի վարձակալման շուկայական արժեքի հաշվարկը:
- Կարենոր ներդրում է նաև կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ զարգացման նիջոցների և պարագաների՝ 2.424 եվրո արժողությամբ նվիրատվությունը, որի հաշվարկը ներառում է նաև գործերի ու հեծանիվների նվիրատվությունները:
- Ընդհանուր, ծրագրի մասով օգուտների ընդհանուր արժեքը կազմել է 18.984 եվրո, որը տպավորիչ արդյունք է, ինչին հասնելու համար հավանական գլխավոր գործոն է ԵԽ-ի մարդկային ռեսուրսների և աշխատանքային նշակույթի կապիտալը: Այս ցուցիչը միանշանակ տարբեր է լինելու՝ իրականացնող կառույցով պայմանավորված:
- Կենտրոնի հիմնադրման տարում գործառնական ծախսերի ընդհանուր հաշվարկը, առանց օգուտների, կազմել է 39.989 եվրո: Օգուտների, այն է՝ ոչ ֆինանսական, և այլ ներդրումների հաշվարկով ծախսը նվազեցվել է մինչև 32.189 եվրո առաջին տարվա համար: Դաշվի առնելով, որ առաջին տարում, հիմնադրման աշխատանքներով պայմանավորված, երիտասարդական ծառայությունները տրամադրվել են ընդհանուր 5 ամիսների ընթացքում, մեկ երեխայի հաշվարկով ծախսը տարեկան կազմել է 66,65 եվրո, որից ընթացիկ ծախսերի հաշվարկը կազմել է 18,59 եվրո:
- ԵԽ-ի համար կենտրոնի գործարկման ծախսը երկրորդ և հաջորդ տարիներին տարեկան կկազմի 26.770 եվրո (առանց օգուտների հաշվարկի) և 18.418 եվրո (օգուտների հաշվարկով): Մեկ երեխայի հաշվարկով ծախսը երկրորդ և հաջորդ տարիների համար տարեկան կկազմի համապատասխանաբար 44,62 եվրո (առանց օգուտների հաշվարկի) և 30,70 եվրո (օգուտների հաշվարկով):
- Կարիք կա նշելու, որ վերլուծության մեջ օգտագործված հաշվարկները վերաբերում են ԵԽ-ի կողմից իրականացված «Բաց Երիտասարդական աշխատանք. Գյումրիում երիտասարդների հղողացում» ծրագրի երիտասարդական ծառայությունների տրամադրման 5 ամիսներին, ինչպես նաև առկա ֆինանսական և ոչ ֆինանսական ռեսուրսներին:

## Հավելված 2. Խմբային քննարկումների ուղեցույցեր

### Երիտասարդական ոլորտի ներկայացուցիչների շրջանում խմբային քննարկման ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քննարկման նպատակն է բացահայտել Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի զարգացման նախադրյալները. ինչպես նաև ստանալ առաջարկներ:

#### Նշում մոդերատորի համար

Ներկայանալ՝ անուն-ազգանունը, կազմակերպությունը: Ներկայացնել քննարկման նպատակը, արդյունքները, տևողությունը: Հավաստիացնել, որ կապահպանվի քննարկման ընթացքում արտահայտված անհատական կարծիքների գաղտնիությունը:

Նշել, որ Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքը ձայնագրվելու է (ինարավորության դեպքում նաև տեսագրվելու է): Ստացված տեղեկությունները սղագրվելու և վերլուծվելու են:

Գրանցել մասնակիցների թիվը, տալ կազմի հակիրճ ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ կրթական մակարդակը, զբաղվածությունը, սեօթ, տարիքը:

#### Ներածական հարցեր

1. Խնդրում ենք ներկայանալ՝ կրթություն, մասնագիտություն, հետաքրքրություններ:
2. Խնդրում ենք ներկայացնել ձեր փորձը երիտասարդության ոլորտում:
3. Հայաստանում երեխաներն ու երիտասարդները ի՞նչ հիմնական խնդիրներ ունեն, ի՞նչ ցանկություններ ունեն:
4. Ինչպիսի՞ կառույցներ են գործում Հայաստանում, որոնք աջակցում են երեխաներին և երիտասարդներին: Ինչպես՞ ս կզնահատեք նրանց գործունեությունը, արդյունավետությունը, ազդեցությունը:
5. Խնդրում ենք ներկայացնել ձեր, ձեր կազմակերպության կողմից կիրառվող մոտեցումները, մեթոդաբանությունները, գործիքները, որ օգտագործում եք երեխաների ու երիտասարդների հետ տարվող աշխատանքներում:
6. Խնդրում ենք քննարկել այդ մոտեցումների մեթոդաբանությունների և գործիքների արդյունավետությունը: Արանձնացնել դրանցից առավել արդյունավետը և քիչ արդյունավետը: Խնդրում ենք հիմնավորել:

7. Ի՞նչ թեմաներով քննարկումներ, դասընթացներ եք իրականացնում Երեխաների և Երիտասարդների համար: Ինչպէ՞ս եք ընտրում և մշակում թեմաները: Իրականացնո՞ւն եք գնահատում ու վերանայում:
8. Ժամանցային ինչպիսի՞ ծրագրեր եք իրականացնում:
9. Երիտասարդների նախաձեռնությունների խրախուսմանն ուղղված միջոցառումներ իրականացնո՞ւմ եք: Խնդրում ենք մանրամասնել:
10. Առլրիշ ինչպիսի՞ միջոցառումներ եք իրականացնում, որքանո՞վ են դրանք հետաքրքրական երեխաներին ու Երիտասարդներին, ինչո՞ւ:
11. Անհատական ինչպիսի՞ աշխատանքներ եք իրականացնում երեխաների և Երիտասարդների հետ, որքա՞ն արդյունավետ ու օգտակար կզնահատեք այդ աշխատանքները, խնդրում ենք մանրամասնել, օրինակներ բերել:
12. Ինչպիսի՞ միջոցառում կամ հանդիպում կառանձնացնեք, որ տպավորել է ձեզ, ինչո՞ւ:
13. Առհասարակ երեխաներն ու Երիտասարդները կիսվում են ծրագրերի մասին իրենց տպավորություններով: Խնդրում ենք ներկայացնել:
14. Ի՞նչ իմնական խոչընդոտներ, խնդիրներ եք հանդիպում երեխաների և Երիտասարդների հետ տարվող աշխատանքներում՝ բռվանդակային, կազմակերպչական: Լուծվե՞լ են այդ խնդիրները, ինչպէ՞ս, ո՞վ է աջակցել:
15. Տեղյա՞կ եք Գյումրիում գործող Երիտասարդական տան մասին: Ինչպէ՞ս եք տեղեկացել և/կամ առնչվել: Ինչպէ՞ս կզնահատեք կենտրոնի գործունեությունը:
16. Ի՞նչ քայլեր կառաջարկեք Երիտասարդական տան աշխատանքները բարելավելու ուղղությամբ:
17. Առհասարակ ծանո՞թ եք բաց Երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությանը: Ինչպիսի՞ առանձնահատկություն կնշեք, որ արդիական է դարձնում այդ մեթոդաբանության կիրառումը այսօր Հայաստանում: Ըստ ձեզ՝ Հայաստանում անհրաժե՞շտ է ներդնել այդ մեթոդաբանությամբ գործող կենտրոններ:
18. Հայաստանում կա՞ն նախադրյալներ նման կենտրոնների ստեղծման համար՝ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, իրավական հիմքեր:
19. Ինչպիսի՞ քայլեր պետք է ձեռնարկել ԲԵԱ ներդնելու համար: Ո՞ր կառույցները պետք է իրականացնեն և/կամ կարող են իրականացնել այդ քայլերը:
20. Կնշե՞ք համայնքներ, որտեղ առաջնային կարիք կա նման կենտրոններ ստեղծելու: Խնդրում ենք հիմնավորել և մանրամասնել:
21. Կա՞ն առաջարկներ Հայաստանում Երիտասարդական աշխատանքի զարգացման, ԲԵԱ ներդրման համար: Խնդրում ենք ներկայացնել:

**Ծնորհակալություն հայտնել մասնակցության համար:**

## «Երիտասարդական տուն» ծրագրի շահառուների ուսուցիչների շրջանում խմբային քննարկման ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քննարկման նպատակն է բացահայտել ուսուցիչների վերաբերմունքը, նրանց տեսանկյունից շահառուների վրա ԵՏ ծրագրի արդյունքներն ու ազդեցությունը:

### Նշում մոդերատորի համար

Ներկայանալ՝ անուն-ազգանունը, կազմակերպությունը: Ներկայացնել քննարկման նպատակը, արդյունքները, տևողությունը: Հավաստիացնել, որ կպահպանվի քննարկման ընթացքում արտահայտված անհատական կարծիքների գաղտնիությունը:

Նշել, որ Ֆոկուս խնբային քննարկումների ընթացքը ձայնագրվելու է (հնարավորության դեպքում նաև տեսագրվելու է): Ստացված տեղեկությունները սղագրվելու և վերլուծվելու են:

Գրանցել մասնակիցների թիվը, տալ կազմի հակիրճ ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ կրթական մակարդակը, զբաղվածությունը, սեռը, տարիքը:

### Ծրագրի համապատասխանությունը, արդիականությունը

#### Ներածական հարցեր

1. Խնդրում ենք ներկայանալ՝ կրթություն, մասնագիտություն:
2. Զեր կարծիքով, Գյումրիում երեխաներն ու երիտասարդները ի՞նչ իհմնական խնդիրներ ունեն, ի՞նչ ցանկություններ ունեն:
3. Ի՞նչ գիտեք երիտասարդական աշխատանքի մասին:
4. Ինչպիսի՞ կառույցներ են գործում Գյումրիում, որոնք աջակցում են երեխաներին ու երիտասարդներին: Ինչպե՞ս կզնահատեք նրանց գործունեությունը:

### Ծրագրի արդյունավետությունը/ազդեցությունը

5. Ի՞նչ գիտեք երիտասարդական տան մասին, ինչպե՞ս եք տեղեկացել:
6. Զեր դասավանդած դասարաններից մոտավորապես քանի՞ աշակերտ է հաճախում երիտասարդական տուն:
7. Երեխաները կիսվո՞ւմ են երիտասարդական տան մասին իրենց տպավորություններով: Ի՞նչն է ձեզ առավելապես տպավորել:

8. Զեր տեղեկությամբ, Երիտասարդական տաճը ի՞նչ թեմաներով են քննարկումներ ու դասընթացներ եղել: Կարևո՞ր է ին թեմաները երեխաների համար:
9. Տեղյա՞կ եք արդյոք, թե Երիտասարդական տնից դուրս ինչպիսի՞ միջոցառումներ են իրականացվել, որքանո՞վ էին դրանք հետաքրքրական երեխաների համար, ինչո՞ւ:
10. Աշակերտները կիրառո՞ւմ են ինչ-որ գիտելիք, հմտություն, որոնք, ըստ ձեզ, նրանք ստացել են՝ Երիտասարդական տուն հաճախելով:
11. Նկատե՞լ եք արդյոք որևէ դրական կամ բացասական փոփոխություն այն աշակերտների մեջ, որոնք արդեն որոշ ժամանակ հաճախում են Երիտասարդական տուն: Խնդրում ենք բերել օրինակներ:
12. Զեր կարծիքով, կա՞ն ինչ-որ (հնացական, ունակության, վարքագծային) տարրերություններ Երիտասարդական տուն հաճախող աշակերտների ու չհաճախողների միջև: Ինչպիսի՞ն են դրանք:

#### **Կայունություն**

13. Կցանկանայի՞ք, որ շարունակվի Երիտասարդական տաճ գործունեությունը, Էլ ավելի շատ աշակերտներ ներգրավվեն նրա աշխատանքներում: «Այո»/«ոչ» պատասխանների դեպքում խնդրում ենք մեկնաբանել:
14. Ինքներդ կցանկանայի՞ք մասնակցել Երիտասարդական տաճ գործունեությանը: Ի՞նչ ծնով: «Այո»/«ոչ» պատասխանների դեպքում խնդրում ենք մեկնաբանել:
15. Ի՞նչ կառաջարկեք Երիտասարդական տաճ աշխատանքները բարելավելու ուղղությամբ:

**Ծնորհակալություն հայտնել մասնակցության համար:**

## «Երիտասարդական տուն» ծրագրի շահառուների շրջանում խմբային քննարկման ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քննարկման նպատակն է բացահայտել ծրագրի շահառուների վրա ծրագրի ազդեցությունը:

### Նշում մոդերատորի համար

Ներկայանալ՝ անուն-ազգանունը, կազմակերպությունը: Ներկայացնել քննարկման նպատակը, արդյունքները, տևողությունը: Հավաստիացնել, որ կպահպանվի քննարկման ընթացքում արտահայտված անհատական կարծիքների գաղտնիությունը:

Նշել, որ Ֆոկուս խնդրային քննարկումների ընթացքը ձայնագրվելու (հնարավորության դեպքում նաև տեսագրվելու է): Ստացված տեղեկությունները սղագրվելու և վերլուծվելու են:

Գրանցել մասնակիցների թիվը, տալ կազմի հակիրճ ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ կրթական մակարդակը, զբաղվածությունը, սեռը, տարիքը:

### Ծրագրի համապատասխանությունը, արդիականությունը

#### Ներածական հարցեր

1. Խնդրում ենք ներկայանալ՝ կրթություն, հետաքրքրություններ:
2. Բացի հիմնական կրթությունից (դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություն), այլ կրթական կենտրոններ հաճախում եք: Եթե այո, նշեք, եթե ոչ, խնդրում ենք նշել՝ ինչո՞ւ:
3. Գյումրիում ձեր տարիքի երեխաները, երիտասարդները ի՞նչ հիմնական խնդիրներ ունեն, ի՞նչ ցանկություններ ունեն:

#### Ծրագրի իրականացման գործընթաց

4. Ինչպե՞ս եք տեղեկացել Երիտասարդական տան նասին: [Նշում մոդերատորի համար. Եթե երիտասարդները Երիտասարդական տունը այլ կերպ են կոչում, նախապես ճշտել, կիրառել այդ արտահայտությունը]: Ինչպե՞ս եք ներգրավվել:
5. Երբվանի՞ց եք հաճախում Երիտասարդական տուն, ի՞նչ հաճախականությամբ եք գալիս:
6. Որքանո՞վ եր ակունքի վայրը հասանելի ծեզ/ծեր բնակավայրին: Վայրը հարմարավե՞տ է: Խնդրում ենք մանրամասնել «այո»/«ոչ» պատասխանները:

## **Ծրագրի արդյունավետությունը/ազդեցությունը**

7. Կներկայացնե՞ք Երիտասարդական տաճ աշխատանքը: Ի՞նչ էիք անում հիմնականում, որքա՞ն էին տևում հանդիպումները և այլն: Խնդրում ենք բերել օրինակներ:
8. Ինչպիսի՞ն են Երիտասարդական տաճ աշխատակիցները, գր՞՞ի եք նրանց աշխատանքից:
9. Ի՞նչ թեմաներով քննարկումներ ու դասընթացներ են եղել: Կարևո՞ր էին թեմաները ձեզ համար, ի՞նչ օգտակար բան ստացաք կամ սովորեցիք այդ քննարկումների ու դասընթացների ընթացքում:
10. Երիտասարդական տնից դուրս ինչպիսի՞ միջոցառումներ են իրականացվել, որքան վ էին դրանք հետաքրքրական, ինչո՞ւ:
11. Անհատական ինչպիսի՞ աշխատանքներ են տարվել ձեզ հետ, որքա՞ն արդյունավետ, օգտակար կգնահատեք այդ աշխատանքները, խնդրում ենք մանրամասներ, օրինակներ բերել:
12. Ինչպե՞ս կգնահատեք դասընթացավարների աշխատանքը:
13. Ինչպիսի՞ միջոցառում, հանդիպում կառանձնացնեք, որ ստավորել է ձեզ, ինչո՞ւ:
14. Ի՞նչ հիմնական խոչընդոտներ, խնդիրներ են առաջացել այդ հանդիպումների ժամանակ՝ բովանդակային, կազմակերպչական: Լուծվե՞լ են այդ խնդիրները, ինչպե՞ս, ո՞վ է աջակցել:
15. Ի՞նչ գիտելիքներ ու հմտություններ եք ստացել Երիտասարդական տաճ: Խնդրում ենք բերել օրինակներ:
16. Այժմ ի՞նչ գիտելիք, հմտություն եք կիրառում ձեր կյանքում, որ ստացել եք այդ դասընթացների ժամանակ:
17. Ընդհանուր առմամբ ի՞նչ է տվել ձեզ Երիտասարդական տունը, ի՞նչ է փոխվել ձեր կյանքում այնտեղ ներգրավվելուց հետո:

## **Կայունություն**

18. Կցանկանա՞ք, որ շարունակվի Երիտասարդական տաճ գործունեությունը: Կարևո՞ր է Երիտասարդական տունը: «Այո»/«ոչ» պատասխանների դեպքում խնդրում ենք մեկնաբանել:
19. Կմանակցե՞ք Երիտասարդական տաճ հետագա գործունեությանը: «Այո»/«ոչ» պատասխանների դեպքում խնդրում ենք մեկնաբանել:
20. Ի՞նչ եք պատրաստ անելու ինքներդ Երիտասարդական տաճ գործունեության շարունակականությունն ապահովելու համար:
21. Ի՞նչ կառաջարկեք Երիտասարդական տաճ աշխատանքները բարելավելու ուղղությամբ:

**Ծնորհակալություն հայտնել մասնակցության համար:**

## Երիտասարդների հետ խմբային քննարկման ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քննարկման նպատակն է բացահայտել համայնքի երիտասարդների կարիքները և նախագծել երիտասարդական կենտրոնի պահանջարկը:

### Նշում մոդերատորի համար

Ներկայանալ՝ անուն-ազգանունը, կազմակերպությունը: Ներկայացնել քննարկման նպատակը, արդյունքները, տևողությունը: Դավաստիացնել, որ կպահպանվի քննարկման ընթացքում արտահայտված անհատական կարծիքների գաղտնիությունը:

Նշել, որ Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքը ձայնագրվելու է (հնարավորության դեպքում նաև տեսագրվելու է): Ստացված տեղեկությունները սղագրվելու և վերլուծվելու են:

Գրանցել մասնակիցների թիվը, տալ կազմի հակիրճ ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ կրթական մակարդակը, զբաղվածությունը, սեռը, տարիքը:

### Ներածական հարցեր

- Խնդրում ենք ներկայանալ՝ կրթություն, զբաղվածություն, հետաքրքրություններ:
- Զեր քաղաքում, համայնքում ձեր տարիքի երեխաները, երիտասարդները ի՞նչ իիմնական խնդիրներ ունեն, ի՞նչ ցանկություններ ունեն:
- Երիտասարդների հարցերով զբաղվող ինչպիսի՞ կառույցներ են գործում ձեր քաղաքում: Ինչպե՞ս կգնահատեք այդ կառույցների աշխատանքները: Խնդրում ենք մանրանասնել:

### Կրթական գործընթացներ

- Բացի իիմնական կրթությունից (դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություն), այլ կրթական կենտրոններ հաճախո՞ւմ եք ձեր քաղաքում: Եթե այս, նշեք, եթե ոչ, խնդրում ենք նշել՝ ինչու: Որքանո՞վ եք գոհ այդ կենտրոնների աշխատանքից: Ի՞նչը կցանկանայիք փոխվեր այդ կառույցների աշխատանքում: Խնդրում ենք մանրանասնել:
- Այլ քաղաքի կրթական կենտրոններում դասընթացների մասնակցե՞լ եք: Ինչպիսի՞ դասընթացների եք մասնակցել: Ինչպե՞ս եք տեղեկացել դրանց մասին: Որքանո՞վ էին օգտակար: Ի՞նչը կփոխեիք այդ դասընթացների մեջ:
- Ընդհանուր առմանք ձեր քաղաքում ինչպե՞ս են երիտասարդները տեղեկություն ստանում քաղաքում իրականացվող միջոցառումների, ծրագրերի վերաբերյալ:

7. Ինչպե՞ս եք տեղեկացել այսօրվա հանդիպման մասին: Ինչո՞վ է պայմանավորված այս հանդիպմանը ձեր մասնակցությունը:
8. Կա՞ն Երիտասարդներ, որոնք, ըստ ձեզ, դուրս են մնում քաղաքի կյանքից, տեղեկատվությունից: Եթե այս, խնդրում ենք մանրանասնել:

### **Ժամանցային հևարավորություններ**

9. Որտե՞ղ և ինչպե՞ս են Երիտասարդները ձեր քաղաքում ժամանակ անցկացնում: Ինչպե՞ս կզնահատեք այդ վայրերի անվտագնությունը, ապահովությունը: Ի՞նչը կցանկանայիք, որ փոխվեր:
10. Խնդրում ենք ներկայացնել ձեր սովորական օրը, ինչո՞վ եք զբաղվում օրվա ընթացքում: Ինչո՞վ կուգենիք զբաղվել օրվա ընթացքում, որ չեք կարողանում: Խնդրում ենք մանրանասնել:

### **Կամավորություն, Երիտասարդական նախաձեռնություններ**

11. Ունե՞ք կամավորության փորձ: Եթե այս, խնդրում ենք ներկայացնել: Ի՞նչ տվեց այդ փորձը: Կցանկանայի՞ք նմանատիպ փորձ կրկին ունենալ:
12. Ինչ-որ նախաձեռնություններ ունեցե՞լ եք, օրինակ, ի՞նչ մտքեր, գաղափարներ ունեք, որ կցանկանայիք իրականացնել:
13. Կա՞ն ինարավորություններ նման գաղափարները կյանքի կոչելու: Քննարկե՞լ եք այդ մտքերը որևէ մեկի հետ: Եթե այս, ո՞ւմ հետ, և ընթացք ստացե՞լ է, եթե ոչ, ինչո՞ւ: Դիմե՞լ եք որևէ կառույցի այն իրականացնելու համար: Եթե ոչ, ինչո՞ւ, եթե այս, ո՞ւմ կամ ո՞ր կառույցին, նկարագրեք ընթացքը:
14. Կցանկանայի՞ք, որ ձեր քաղաքում լիներ Երիտասարդական կենտրոն: Եթե ոչ, ինչո՞ւ, եթե այս, խնդրում ենք նկարագրել, թե ինչպիսին կուգենիք, որ այն լիներ, ի՞նչ մասնագետներ լինեին, որտե՞ղ գտնվեր, ինչպիսի՞ կառուցվածք և դիզայն ունենար:
15. Անփոփենք այսօրվա քննարկումը: Կա՞ն մտքեր, որ կիսատ կամ ոչ լիարժեք քննարկեցինք, խնդրում ենք ներկայացնել:

**Ծնորհակալություն հայտնել մասնակցության համար:**

## «Երիտասարդական տուն» ծրագրի շահառուների ծնողների շրջանում խմբային քննարկման ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քննարկման նպատակն է բացահայտել ծրագրի շահառու երիտասարդների վրա ծրագրի ազդեցությունը՝ ըստ ծնողների:

### Նշում մոդերատորի համար

Ներկայանալ՝ անուն-ազգանունը, կազմակերպությունը: Ներկայացնել քննարկման նպատակը, արդյունքները, տևողությունը: Հավաստիացնել, որ կպահպանվի քննարկման ընթացքում արտահայտված անհատական կարծիքների գաղտնիությունը:

Նշել, որ Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքը ձայնագրվելու է (հնարավորության դեպքում նաև տեսագրվելու է): Ստացված տեղեկությունները սղագրվելու և վերլուծվելու են:

Գրանցել մասնակիցների թիվը, տալ կազմի հակիրճ ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ կրթական մակարդակը, գրաղվածությունը, սեռը, տարիքը:

### Ծրագրի համապատասխանությունը, արդիականությունը

#### Ներածական հարցեր

- Խնդրում ենք ներկայանալ՝ կրթություն, մասնագիտություն, հետաքրքրություններ:
- Բացի հիմնական կրթությունից (դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություն), այլ կրթական կենտրոններ հաճախո՞ւմ են ձեր երեխաները: Եթե այո, նշեք այդ կենտրոնները, ինչպե՞ս եք ընտրել: Եթե ոչ, խնդրում ենք նշել՝ ինչու:
- Գյումրիում երեխաները, երիտասարդներն ի՞նչ հիմնական խնդիրներ ունեն, ի՞նչ ցանկություններ ունեն:
- Գյումրիում ինչպիսի՞ կառույցներ են գործում, որ աջակցում են երեխաներին ու երիտասարդներին: Ինչպե՞ս կգնահատեք նրանց գործունեությունը:

#### Ծրագրի իրականացման գործընթաց

- Ինչպե՞ս եք դուք կամ ձեր երեխաները տեղեկացել Երիտասարդական տան մասին: [Նշում մոդերատորի համար. Եթե երիտասարդները կամ նրանց ծնողները Երիտասարդական տունն այլ կերպ են կոչում, նախապես ճշտել, կիրառել այդ արտահայտությունը]: Ինչպե՞ս եք ներգրավվել:

6. Երբվանի՞ց են ձեր երեխաները հաճախել Երիտասարդական տուն, ի՞նչ հաճախականությամբ են գալիս:
7. Որքանո՞վ էր ակումբի վայրը հասանելի ձեզ/ձեր բնակավայրին: Վայրը հարմարավե՞տ է:

Խնդրում ենք մանրամասնել «այո»/«ոչ» պատասխանները:

### **Ծրագրի արդյունավետությունը/ազդեցությունը**

8. Տեղյա՞կ եք Երիտասարդական տան աշխատանքներին. ինչո՞վ էին զբաղվում երեխաները, Երիտասարդները, հանդիպումները որքա՞ն էին տևում և այլն: Խնդրում ենք բերել օրինակներ:
9. Ինչպիսի՞ն են Երիտասարդական տան աշխատակիցները, գո՞հ եք նրանց աշխատանքից:
10. Ի՞նչ թեմաներով քննարկումներ ու դասընթացներ են եղել: Կարևո՞ր էին թեմաները ձեր երեխաների համար, ի՞նչ օգտակար բան ստացան կամ սովորեցին այդ քննարկումներից, դասընթացներից:
11. Երիտասարդական տնից դուքս ինչպիսի՞ միջոցառումներ են իրականացվել, որքա՞ն են դրանք հետաքրքրական ձեր երեխաներին, ինչո՞ւ:
12. Առհասարակ ձեր երեխաները հաղորդակցվո՞ւմ են Երիտասարդական տան մասին իրենց տպավորություններով: Խնդրում ենք ներկայացնել: Ի՞նչն է ձեզ առավելապես տպավորել:
13. Անհատական ինչպիսի՞ աշխատանքներ են տարվել երեխաների հետ, որքա՞ն արդյունավետ ու օգտակար կգնահատեք այդ աշխատանքները, խնդրում ենք մանրամասնել, օրինակներ բերել:
14. Ինչպե՞ս կգնահատեք դասընթացավարների աշխատանքը:
15. Ինչպիսի՞ միջոցառում, հանդիպում կառանձնացնեք, որ տպավորել է ձեզ, ինչո՞ւ:
16. Ի՞նչ հիմնական խոչընդոտներ, խնդիրներ են առաջացել այդ հանդիպումների ժամանակ՝ բովանդակային, կազմակերպչական: Լուծվե՞լ են այդ խնդիրները, ինչպե՞ս, ո՞վ է աջակցել:
17. Ի՞նչ գիտելիքներ, հմտություններ են ստացել ձեր երեխաները Երիտասարդական տանը: Խնդրում ենք բերել օրինակներ:
18. Այժմ ի՞նչ գիտելիք, հմտություն են կիրառում նրանք իրենց կյանքում, որ ստացել են այդ դասընթացների ժամանակ:
19. Առհասարակ ի՞նչ է տվել ձեր երեխաներին Երիտասարդական տունը, ի՞նչ է փոխվել նրանց կյանքում այնտեղ ներգրավվելուց հետո:

### **Կայունություն**

20. Կցանկանա՞ծ՝ շարունակվի Երիտասարդական տան գործունեությունը: Կարևո՞ր է Երիտասարդական տունը: «Այո»/«ոչ» պատասխանների դեպքում խնդրում ենք մեկնաբանել:
21. Կմասնակցե՞ծ դուք կամ ձեր երեխաները Երիտասարդական տան հետագա գործունեությանը: «Այո»/«ոչ» պատասխանների դեպքում խնդրում ենք մեկնաբանել:
22. Ի՞նչ եք պատրաստ անելու Երիտասարդական տան գործունեության շարունակականությունն ապահովելու համար:
23. Ի՞նչ կառաջարկեք Երիտասարդական տան աշխատանքները բարելավելու ուղղությանը:

**Ծնորհակալություն հայտնել մասնակցության համար:**

**Բաց Երիտասարդական աշխատանքը Դայաստանում.**  
**առկա վիճակի եւ զարգացման նախադրյալների ուսումնասիրություն**

## Նշումների համար

**Բաց երիտասարդական աշխատանքը Հայաստանում.**  
**առկա վիճակի եւ զարգացման նախադրյալների ուսումնասիրություն**

## Նշումների համար